

*ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆԻ
ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆ. ԴՊՐՈՑԻ
ՏՆՕՐԵՆԻ
2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ*

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏՆՕՐԵՆ՝

/ Ա. Ազատյան /

2021-2022 ուստարին իրականացվել է բնականոն աշխատանքային գրաֆիկով:Դպրոցական յուրաքանչյուր օղակ՝ տնօրենություն, մանկխորհուրդ,առարկայական մասնախմբեր, ծնողական խորհուրդ, աշխորհ, գործել են ութամիկ՝ ըստ ուստարվա սկզբին կազմված և հաստատված պլանների:

2021-2022 ուստարվա սկզբին Նորաշենի Ավ. Իսահակյանի անվան միջն. դպրոցի աշակերտների թիվը կազմել է 421 ,տարին ամփոփելիս՝ 418:

Տեղափոխվել են 11 աշակերտներ՝

- | | | |
|----------------|----------|----------------------------|
| 1. Օհանյան | Մարտին | Սամվելի / II դասարան / |
| 2. Անդրեասյան | Էրիկ | Բաֆֆի / V դասարան / |
| 3. Շահինյան | Սամվել | Արսենի / V դասարան / |
| 4. Դեմիրճյան | Գագիկ | Գեղամի / XI դասարան / |
| 5. Ներսիսյան | Ռազմիկ | Վաղինակի/ XI դասարան / |
| 6. Գրիգորյան | Սամվել | Կարենի / XI դասարան / |
| 7. Մովսիսյան | Ֆլորա | Բաբակենի /XI դասարան / |
| 8. Մարտիրոսյան | Շուշաննա | Երվանդի / XI դասարան / |
| 9. Քոչոյան | Ալիկ | Թամոյի / X դասարան / |
| 10. Բաղայան | Բագրատ | Պարույրի/ IX դասարան / |
| 11. Առաքելյան | Կարինե | Հարությունի/ III դասարան / |

Եկել են 8 աշակերտներ՝

- | | | |
|---------------|--------|---------------------------|
| 1. Պետրոսյան | Հրաչյա | Սարգսի / XI դասարան / |
| 2. Մուրադյան | Ռիմա | Սարգսի / XII դասարան / |
| 3. Անդրեասյան | Էրիկ | Բաֆֆի / V դասարան / |
| 4. Գրիգորյան | Խորեն | Վիրաբի / X դասարան / |
| 5.Կարապետյան | Մարիա | Արսենի / IV դասարան / |
| 6. Սիմոնյան | Մարիամ | Վարդանի / V դասարան / |
| 7. Մելքոնյան | Ֆրունզ | Միսակի / IX դասարան / |
| 8. Առաքելյան | Կարինե | Հարությունի/III դասարան / |

Ելնելով աշակերտների թվաքանակից՝ դպրոցում ձևավորվել է 20 դասարան / միջին խտությունը կազմում է 21 /: 418 աշակերտներից գնահատվել են 371 աշակերտներ /46-ը սովորում են I դասարանում /, IX դասարանի աշակերտ Բաղայան Սարգիս Պարույրի մնացել է նույն դասարանում՝ կրկնելու տվյալ ուսումնական տարվա դասընթացը/մանկխորհուրդ թիվ 9 /, քանի որ ուսումնական տարվա ընթացքում ունեցել է 200 ժամից ավելի բացակայություն:200ժամից ավել բացակայություն են ունեցել Հարությունյան Էրիկը Արթուրի / VIII դասարան/ և Մելքոնյան Ֆրունզը Միսակի / IX դասարան/: Հարությունյան Էրիկը /144 ժամ/հաջողությամբ հանձնել է լրացուցիչ քննություններ <Հայոց լեզու>, <Գրականություն> և <Մաթեմատիկա> առարկաներից, ամփոփիչ ստուգողական աշխատանքներ ուսումնական պլանով սահմանված մյուս առարկաներից և փոխադրվել հաջորդ դասարան/ մանկխորհուրդ թիվ 10/,իսկ Մելքոնյան Ֆրունզը/175 ժամ/, լինելով ԿԱՊԿՈՒ աշակերտ, ավարտել է հիմնական դպրոցը ԱՈՍՊ-ի գնահատման հիման վրա , առանց քննություններ հանձնելու , ծնողի դիմումի համաձայն :

Գնահատված աշակերտներից գերազանցիկ են 62-ը, հարվածային՝ 92-ը:

Դպրոց	2020-21		2021-2022	
	գերազանցիկ	հարվածային	Գերազանցիկ	հարվածային
<i>տարրական</i>	38	34	29	38
<i>հիմնական</i>	19	33	28	29
<i>ավագ</i>	10	36	5	25
	67	103	62	92

Ըստ ներկայացված տվյալների որակը կազմել է 42 %՝ նախորդ տարվա 46%-ի փոխարեն: Դպրոցի առաջադիմությունը կազմել է 100 %՝ պահպանելով նախորդ ուսումնական տարվա արդյունքը: Նախորդ ուստարվա հետ համեմատական տանելիս փաստում ենք առաջադիմության կայունության ցուցանիշ, որակի՝ նվազման $\approx 4\%$ ցուցանիշ: Ցավով պետք է նշեմ, որ չնայած նրան, որ դպրոցում առկա են ուսումնադաստիարակչական աշխատանքների բարձր որակ և որակյալ ուսուցում կազմակերպելու համար գրեթե բոլոր պայմանները: Սակայն վերջին 3 տարիների ընթացքում ուսման որակի շեշտակի փոփոխություն, չնայած գործադրած ջանքերին, չի նկատվում: Համեմատաբար աճել է գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը միջին դպրոցում, բայց դրա փոխարեն նվազել է տարրական և ավագ դպրոցում, ինչը

կապվում է աշակերտների թվի և դասարանական համակազմի հետ, իսկ ավագ

դպրոցում ուսման որակի վրա մեծ ազդեցություն է ունենում այն հանգամանքը, որ սովորողները ավագ դպրոցում ավելի շատ կենտրոնանում են ապագա մասնագիտության հետ կապված առարկաների ուսումնասիրության վրա: Անհրաժեշտ է թե՛ աշակերտների, թե՛ ծնողների շրջանում ավելի շատ աշխատանք տանել միջնակարգ կրթության կարևորության ուղղությամբ, շեշտել գիտելիքի դերն ու նշանակությունը, ընդգծել բազմակողմանի զարգացած մարդու կերպարի դերը հասարակության մեջ՝ որպես հեղինակավոր անհատ: Մասնագիտությունը չդիտել որպես միակ չափանիշ մարդ անհատի ձևավորման հարցում:

Տարվա ընթացքում բացակայությունների թիվը կազմել է 10156 ժամ՝ նախորդ տարվա 10709 ժամի փոխարեն: Այստեղ անհրաժեշտ է ավելի հետևողական և ամենօրյա աշխատանքներ տանել:

Կրթական համակարգում կատարվող բարեփոխումները դպրոցի գործունեությանը նոր պահանջներ ու խնդիրներ են թելադրում: Եվ քանի որ այդ գործընթացը իրականացման երկար ճանապարհ պիտի անցնի, կրթության բնագավառի աշխատողների առջև բազմաթիվ հարցեր են ծառանում: Դրանք վերաբերում են դպրոցական համակարգի ամենատարբեր բնագավառներին՝ սկսած դպրոցի շենքային պայմաններից, դասագրքերից, թեմատիկ ծրագրերից մինչև ուսումնականության բազայի հարստացումը, ՏՀՏ-ի ներդրման խորացումը, աշակերտների հայեցի դաստիարակումը, ուսուցիչների մասնագիտական որակավորումը, հարցեր, որոնք պարզորոշ ամրագրված են ՀՀ կրթության մասին օրենքում:

Կարծում եմ, որ այս բոլոր հարցերից ամենակարևորը դպրոցում մասնագիտական բարձր որակավորում ունեցող, ժամանակակից դպրոցի պահանջներին քաջատեղյակ, իրենց գործին նվիրյալ ուսուցիչներ ունենալն է: Ստեղծված բոլոր պայմաններն ու բարեփոխումներն արդյունավետ կլինեն այն դեպքում, եթե դրանք իրականացնող ուսուցիչը հոգեբանորեն ճիշտ և խորությամբ է ընկալում դրանց անհրաժեշտությունը և սրտացավորեն, պատասխանատվությամբ ու բարեխղճությամբ է գնում դրան ընդառաջ:

2021-2022 ուստարում Նորաշենի միջն դպրոցում դասավանդում է 36 ուսուցիչ: Նրանցից 32-ը կին է՝ 89%, 4-ը տղամարդ՝ 11% , 35-ը բարձրագույն մանկավարժական կրթություն ունեն, իսկ մեկը՝ միջին մասնագիտական: Ուսուցիչների բաշխվածությունը հետևյալն է՝ մինչև 30 տարեկան 8%, 31 – 50 տարեկան՝ 36%, 51 տարեկան և բարձր՝ 56%:

Բոլոր 36 ուսուցիչները դասավանդում են իրենց մասնագիտություններով: Ուսուցիչների ծանրաբեռնվածությունը հետևյալն է՝ մինչև կես դրույք /մինչև 11 դասաժամ/ 22%, կեսից մինչև մեկ դրույք / 12-ից 22 դասաժամ / 47% , մեկից ավել / 23 և ավելի դասաժամ/ 31% : Դպրոցի ուսուցիչների թվի հարաբերությունը սովորողների թվին հավասար է՝ 1 / 11 / տասնմեկ աշակերտին մեկ ուսուցիչ / :

Դպրոցը համալրված է բարձրագույն կրթություն և մասնագիտական խորը պատրաստվածություն ունեցող ուսուցիչներով: Նրանք երկարամյա փորձ ունեցող մանկավարժներ են, որոնք հրաշալի են պատկերացնում դպրոցի արդի խնդիրները և իրենց մասնագիտության մեծ պատասխանատվությունը: Աշխատում են բարեխղճորեն, անընդհատ զբաղվում են ինքնակրթությամբ, իրենց աշխատանքում ներդնում են նորն ու առաջավորը, մեծ տեղ են տալիս համակարգչային գրագիտությանը: 2021-2022 ուստարում հերթական պարտադիր ատեստավորման են մասնակցել 5 ուսուցիչներ՝ ֆիզկուլտուրա, ռուսաց լեզու, ֆիզիկա, անգլերեն, կենսաբանություն առարկաներից և 2 դասվար:

Տնօրենությունը ամենօրյա աշխատանք է տանում ուսուցիչների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Նորաշենի միջն. դպրոցի ուսուցչական անձնակազմում առաջավոր փորձի մեծ զինանոց ունեցող, մասնագիտական խոր գիտելիքների տիրապետող բազմակողմանի զարգացած բազմաթիվ ուսուցիչներ կան, որոնք, սակայն, խուսափում են <Լավագույն ուսուցիչ>, ՀՀ ԿԳ նախարարության Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ համատեղ անցկացվող մրցույթներին, կամավոր ատեստավորման գործընթացին մասնակցելուց: Դպրոցի տնօրենությունը այդ ուղղությամբ անելիքներ ունի:

2021թվ. սեպտեմբերին կոլեկտիվը համալրվեց նոր հաստիքային աշխատողներով՝ «< Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնական>>: 5 երիտասարդ աղջիկները՝ Ազատյան Մարիանան, Իսրայելյան Վարսիկը, Հախնազարյան Հայկուհին, Հայրապետյան Լիլիթը, Մանվելյան Հասմիկը անմիջապես ինտեգրվեցին կոլեկտիվին, դպրոցական աշխատանքային ռիթմին: Նրանք անմիջապես սկսեցին դիտարկումներ՝ բացահայտելու ԿԱՊԿՈՒ սովորողների: Կատարվեց դպրոցական մակարդակի գնահատում, որն իրականացվել է ուսումնական հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից՝ բացահայտելու կրթության գործընթացում երեխայի արդյունավետ մասնակցության սահմանափակումները, դրանք առաջացնող միջավայրային խոչընդոտող գործոնները և դրանց հաղթահարման խթանիչ

գործոնները: Մշտադիտարկումների արդյունքում ուսուցչի օգնականները բացահայտել են, որ ԿԱՊԿՈՒ սովորողների մոտ առկա խնդիրները հիմնականում ուսումնական բնույթ են կրում: Յուրաքանչյուրը, հաշվի առնելով տվյալ աշակերտի առանձնահատկությունները, խնդիրների վերացմանն ուղղված մեթոդների մի համակարգ է մշակել և ներառել կանխարգելիչ միջամտությունների պլանում: Նրանք երկրորդ կիսամյակից սկսած աշխատել են կանխարգելիչ միջամտությունների պլանով և հասել հիմնականում մասնակի հաջողությունների:

Ժամաբաշխումը դպրոցում կատարվել է ըստ հենքային ուսումնական պլանի, իսկ դպրոցական բաղադրիչը, ըստ մանկավարժական խորհրդի որոշման, տնօրինվել է հետևյալ կերպ՝

II դասարան՝ մաթեմատիկա - 1 ժամ

III դասարան՝ մաթեմատիկա - 1 ժամ
մայրենի - 1 ժամ

IV դասարան՝ մաթեմատիկա - 1 ժամ
մայրենի - 1 ժամ

V դասարան՝ անգլերեն - 2 ժամ

VI դասարան՝ անգլերեն - 2 ժամ
հայոց պատմ. - 0,5 ժամ

VII դասարան՝ անգլերեն - 1 ժամ
աշխարհագրություն 1 ժամ
հայոց պատմ. - 0,5 ժամ

VIII դասարան՝ անգլերեն - 1 ժամ
գերմաներեն - 1 ժամ
հայոց պատմ. - 0,5 ժամ

IX դասարան՝ անգլերեն - 1 ժամ
հանրահաշիվ - 1 ժամ
հայոց պատմ. - 0,5 ժամ

X դասարան՝ ձեռնարկ. կրթ. - 2 ժամ
գերմաներեն - 1 ժամ

XI^u դասարան՝ աշխարհագրություն 1 ժամ
հանրահաշիվ - 1 ժամ
կենսաբանություն - 1 ժամ
ձեռնարկ. Կրթ. - 1 ժամ

XI^f դասարան՝ աշխարհագրություն 1 ժամ
հայոց պատմ. - 1 ժամ
կենսաբանություն - 1 ժամ
հանրահաշիվ - 1 ժամ

XII դասարան՝ աշխարհագրություն 1 ժամ
հայոց պատմ. - 1 ժամ
քիմիա - 2 ժամ
հանրահաշիվ - 1 ժամ

Ֆիզկուլտուրա - 0,5 ժամ

Իհարկե դպրոցական բաղադրիչի բաշխման ժամանակ որպես սկզբունք ընդունվել է տվյալ առարկայի նկատմամբ առանձին դասարաններում աշակերտների ունեցած հետաքրքրությունները և որոշ առարկաների թեմատիկ ծրագրերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև արդեն 5 տարի է, ինչ հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու է դասավանդվում անգլերենը դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին՝ 5-9-րդ դասարաններում / շաբաթական 1,5 ժամ/:

XII դաս-ի II կիսամյակի դասաբաշխումը ընդհանուր հոսքի դասարանների համար կատարվել է հետևյալ կերպ՝

Հայոց լեզու	- 4 ժամ
Հայ գրականություն	- 3 ժամ
Հայոց պատմություն	- 6 ժամ
Հանրահաշիվ	- 4 ժամ
Երկրաչափություն	- 2 ժամ
Քիմիա	- 3 ժամ
Կենսաբանություն	- 2 ժամ
Աշխարհագրություն	- 3 ժամ
Գերմաներեն	- 3 ժամ
նԶՊ	- 1 ժամ

Ըստ ուսումնական պլանի կազմվել է դպրոցի դասացուցակը՝ պահպանելով դասացուցակի կազմման կարգը:

Ուսումնական տարվա ընթացքում գումարվել է մանկավարժական խորհրդի 12 նիստ, լսվել են տարբեր զեկուցումներ՝ նպատակ ունենալով նպաստել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի բարձրացմանը: Հակոբյան Ս.-ն հանդես է եկել «Մարդու նկատմամբ վերաբերմունքը և նրա հանդեպ պարտքի զգացումը» թեմայով զեկուցումով, որտեղ անդրադարձել է մարդկային փոխհարաբերություններին, հատկապես ներկուլեկտիվային խնդիրների, ուսուցիչ - աշակերտ, ուսուցիչ - ծնող, ծնող-երեխա հարաբերություններին: Ուսումնասիրել, քննարկել, վերլուծել և մանկխորհրդի ուշադրությանն է ներկայացրել ժամանակակից մեթոդաբանության կիրառման արդյունավետությունը դասապրոցում՝ ելնելով կատարած դասալսումներից:

Ա. Ստեփանյանը, կատարված դասալսումների և խոր ուսումնասիրությունների արդյունքում, հանդես է եկել դաստիարակչական և արտադասարանական խմբակների աշխատանքների մասին տարբեր զեկույցներով, որոնք միտված էին աշակերտների կյանքում դաստիարակչական կարևոր խնդիրների լուծման ուղիներ բացահայտելուն և միջավայրին, հասարակության պահանջներին համապատասխան ապագա քաղաքացու ձևավորմանը:

Լսված հարցերի մեջ եղել են նաև տարբեր հաշվետվություններ, առանձին առարկաների դասավանդման դրվածքի վերլուծություններ՝

1. Հայոց լեզու առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրումը հիմնական դպրոցում / Հովնաթանյան Կ. /

2. ՆԶՊ առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրումը /Հախնազարյան Ս. /:

Տարվա ընթացքում ուսումնական որակի բարձրացման նպատակով կատարվել են տարաբնույթ դասալուսմներ՝ նախօրոք հստակեցնելով դրանց ուղղվածությունը, նպատակներն ու խնդիրները : Դասալուսմներ են կատարվել սակավափորձ ,վերապատրաստված ուսուցիչների մոտ, վերահսկվել է ձեռնարկատիրական կրթության ինտեգրումը տեխնոլոգիայի դասաժամերին տարրական դպրոցում, ՆԶՊ և հայոց լեզու առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրությունը :Դրանցով, ինչպես նաև բաց դասերի ու փոխադարձ դասալուսմների միջոցով անդրադարձ է կատարվել միավորային ու ձևավորող գնահատման խնդիրներին,ուսուցչի մասնագիտական էթիկայի նորմերին,նպաստել մանկավարժության առաջավոր տեխնոլոգիաների,մեթոդների ու հնարների տարածմանը,ուսուցիչ-աշակերտ-դպրոց փոխհարաբերությունների աշակերտակենտրոն բնույթի խթանմանը:Ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչները բաց կամ օրինակելի դասեր են վարել,կարդացել մեթոդական գեկուցումներ առարկայական մասնախմբի նիստերում:Կատարել են ընդհանուր դասալուսմներ բոլոր առարկաներից, տրվել են վերահսկողական գրավոր աշխատանքներ :Արդյունքում ստացվել է, որ ուսուցիչների գերակշիռ մասը դասերը վարում են արդյունավետ, ուսումնական ծրագրերին և չափորոշիչներին համապատասխան և նոր մեթոդների կիրառմամբ:Իսկ նկատված որոշակի թերությունները մանրամասն քննարկվել են համապատասխան մասնախմբերի նիստերում, տրվել են որոշակի ցուցումներ և փորձել շտկումներ կատարել հնարավորինս կարճ ժամանակահատվածում: Ուշադրության կենտրոնում են եղել երիտասարդ ուսուցիչները. նրանց հետ տարվել են առանձին աշխատանքներ: Կազմակերպված հավաքները, բանավեճերն ու սեմինարները նպատակ են ունեցել բարձրացնել ուսուցիչների մանկավարժական-մեթոդական պատրաստվածությունը, ինչպես նաև ստեղծել ջերմ բարոյահոգեբանական աշխատանքային մթնոլորտ: Հաճախ կազմակերպվել են ուսուցողական նպատակով դասալուսմներ փորձառու ուսուցիչների մոտ:Մեծ ուշադրություն է դարձվել դասի ընթացքում ՏՀՏ-երի կիրառմանը:

Ելնելով չափորոշչային պահանջներից, ուսպլանով հատկացված շաբաթական ժամաքանակից և առարկայական ծրագրային պահանջներից, ըստ առարկաների կազմվել ու վերահսկվել է միավորային գնահատման բանավոր, գործնական և գրավոր բաղադրիչների նվազագույն քանակները,որոնց ուղղությամբ առանձնակի շեղումներ չեն արձանագրվել:

Սահմանված կարգով ըստ կիսամյակի մշակվել է ուսուցիչների աշխատաժամանակի բեռնվածությունը՝ ելնելով նրանց շաբաթական ժամաքանակի ծանրաբեռնվածությունից ու դրա հիման վրա կատարել ամենօրյա հաշվառում:Իրականացրած հաշվառման հիման վրա համապատասխան մատյանում կատարվել են բաց թողած և փոխարինված դասաժամերի արձանագրում,որոնց համաձայն կատարվել է աշխատավարձի ժամավճարային հաշվարկը:

Ուստարվա ընթացքում պարբերաբար վերահսկվել է ուսուցիչների աշխատանքային գործունեությունը՝ համաձայն ըստ դասացուցակի և դասաբաշխման կազմված աշխատակարգի,դրանց հիման վրա կատարել ուսուցիչների ամենօրյա հաշվառում: Որոշակի պարբերությամբ ստուգվել են օրվա դասի պլանները՝հաշվի առնելով չափորոշչային ու արդի մանկավարժության պահանջները,համադրել դրանք առարկայական թեմատիկ պլաններին,դասալուսմներին հետևել, թե որքանով է ուսուցիչը պահպանում դրանց պահանջները ու ինչ հմտությամբ է կարողանում դրանք փոփոխել՝ ելնելով

դասապրոցեսում ծագած խնդիրներից ու իրավիճակներից: Իրականացվել է մանկավարժների գործունեության վերահսկողություն աշակերտների իրավունքների պահպանման ուղղությամբ: Այդ նպատակով խրախուսվել է աշակերտակենտրոն ուսուցման գործընթացը, հետևել տնային և դասարանական աշխատանքների չափերին, գնահատման տեսակների բազմազանությանը, միավորային գնահատման օբյեկտիվ ու հրապարակային լինելուն:

Մանկավարժական գործունեության ստուգումներ են իրականացվել ըստ ստուգողական աշխատանքների համապատասխանության. համապատասխանությունը շաբաթական ժամաքանակին, գնահատման համակարգին ու նորմերին, օրացուցային-թեմատիկ պլաններին, դասաժամի տևողությանն ու բարդության աստիճանին՝ ըստ չափորոշչային մակարդակների, emis.am կայքի էլեկտրոնային մատյանում կատարված գրանցումներին:

2019-2020 ուստարվանից դպրոցը մասնակցում է emis.am կայքի աշխատանքներին, սակայն առկա են բացթողումներ. ուսուցիչների, աշակերտների և ծնողների մասնակցության ցածր աստիճան, մեծաթիվ փոփոխված գնահատականներ, չկատարված գրանցումներ: Այդ կապակցությամբ ուստարվա ընթացքում առանձին ուսուցիչներ ստացել են հիշեցումներ ու դիտողություններ : Այս ուղղությամբ դեռ անելիքներ ունենք:

Դպրոցում գործել են առարկայական 6 մասնախմբեր՝

- 1 հայոց լեզու և գրականություն
- 2 ֆիզմաթ
- 3 պատմաաշխարհագրական
- 4 օտար լեզուների
- 5 կենսաքիմիայի
- 6 տարրական :

Ժամանակին գումարվել են մասնախմբերի հերթական միստերը: Մ/մ նիստերը ձևավորվել են <ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն> ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրության 90-94 կետերի համաձայն և դպրոցի ուսումնադաստիարակչական ծրագրերի տարեկան պլանին համապատասխան: Պահպանված են մ/մ մատյանների վարման և լրացման կարգը: Որպես մ/մ նիստերի այլընտրանքային ձևեր անցկացվել են նաև կլոր սեղաններ, քննարկումներ, շնորհանդեսներ: Աշխատանքային գործունեության ընթացքում մասնախմբերը առաջնորդվում են ավանդականի հիմքի վրա շաղախված մանկավարժական նոր մոտեցումներով, անհատի, Քաղաքացու ձևավորման ու զարգացման գաղափարով՝ հարազատ մնալով <<Կրթության որակի համապատասխանության>> ծրագրի պահանջներին:

Մասնախմբերի աշխատանքների թեմատիկան ունի հետևյալ բաժինները՝

1. ուսուցման մեթոդիկա
2. օրինակելի դասեր
3. դաս-միջոցառումներ
4. զեկուցումներ:

Ուստարվա ընթացքում համակարգել և վերահսկվել է առարկայական մասնախմբերի գործունեությունը, մասնակցել նրանց աշխատանքային պլանների կազմմանը և օժանդակել ամենամսյա նիստերի գումարմանը:

Յուրաքանչյուր կիսամյակի սկզբին մ/մ նախագահների հետ ուսումնասիրել, քննարկվել և հաստատվել են առարկայական թեմատիկ պլանները, հետևել դրանց կատարմանը, վերահսկվել - կատարողականի ընթացքը:

Մ/Մ նիստերին, դասալսումներում և զրույցների ընթացքում համակարգվել է մանկավարժների գործունեությունը ինքնակրթության ուղղությամբ, օժանդակելով նրանց հաղորդակցմանը արդի մանկավարժական տեխնոլոգիաներին, հոգեբանամանկավարժական իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Այդ նպատակով դպրոցի գրադարանում ստեղծվել է մեթոդական անկյուն, որում առանձնացված գրականությունը օգտագործվել է ուսուցիչների կողմից, կազմվել մ/մ նիստերին քննարկվելիք բանավեճերի և զեկուցումների թեմաներ:

Կիսամյակի ավարտին յուրաքանչյուր մեթոդիավորում ներկայացրել է հաշվետվություն՝ նպատակ ունենալով կատարել մասնախմբի աշխատանքների վերլուծություն, գնահատել աշխատանքների արդյունավետությունը, կարևորել մասնախմբի գործունեությունը:

Հայոց լեզվի և գրականության մասնախումբը / ղեկավար՝ Կ. Հովնաթանյան / աշխատել է ռիթմիկ, ներառել գիտելիքների որակն ու դասավանդման մանկավարժական բոլոր խնդիրները՝ նոր մեթոդների առաջավոր փորձի ներդրման միջոցով:

Մ. Պողոսյանի «Հովհ. Շիրադի Թագադրում բանաստեղծության ուսուցումը»-ն ա դասը 7-րդ դաս-ում ,Դ. Գրիգորյանի 8-րդ^Ա դաս-ում Հովհ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի ամփոփիչ դասը, Ս. Հակոբյանի 5-րդ^Բ դաս-ում Վիլյամ Սարոյանի «Երեք խորհուրդ» հեքիաթի ուսուցումը /ՏՀՏ գործիքների կիրառմամբ/, ինչպես նաև կազմակերպած համադպրոցական միջոցառումը «Եվ Մեսրոպի սուրբ հանձարով...» առաջավոր փորձի փոխանակման խնդիր են ունեցել, բիսել են ժամանակակից դասի պահանջներից, որոնք արդյունավետ ուսուցմանը նպաստող հարցերի մեկնաբանություններ են:

Մասնախմբի անդամները կատարել են մանկավարժամեթոդական աշխատանք և պարբերաբար զեկուցումներով հանդես եկել մասնախմբի նիստերին՝ «Մեջբերվող ուղղակի խոսքի փոխակերպումը անուղղակիի» և «Ուսուցողական նպատակով տրվող առաջադրանքներ կամ ձևավորող գնահատում» / Ս. Հակոբյան /, «Ինչպես եմ ուսուցանում գոյականի թիվը» / Կ. Հովնաթանյան /, «Գերակտիվ երեխաները դասապրոցեսում» / Դ. Գրիգորյան / :

Անդրադարձ է կատարվում « Հայոց լեզու և գրականություն» ամսագրի և armedu.am կայք էջում տեղադրված նյութերին, որոնք նպաստում են գիտական մտածողության խթանմանը: «Մեղու. հայերենը բոլորի համար» մրցույթին աշակերտների ակտիվ մասնակցությունը նպատակ ուներ խթանելու սովորողների գրավոր խոսքը և ճանաչողական հետաքրքրությունները: 4-րդ^Բ դասարանի աշակերտ Բաբրոյան Սամվելը լավագույն որակավորմամբ արժանացել է պատվոգրի և խրախուսական մրցանակի:

Մասնախմբի անդամները ողջ տարվա ընթացքում աշխատել են պատասխանատվության բարձր զգացումով, նվիրումով :

Ֆիզմաթ մասնախումբը / ղեկավար՝ Հ. Համբարձումյան / նույնպես աշխատել է ռիթմիկ և համախմբված : Ժամանակին գումարվել են մասնախմբի նիստերը , լսվել մանկավարժական զեկուցումներ, որոնք միտված էին ուսուցչի մեթոդամանկավարժական պատրաստվածության, մանկավարժական փորձի, աշխատանքի նկատմամբ պատասխանատվության բարձրացմանը: Առաջավոր փորձի փոխանակման դասեր են կազմակերպվել ֆիզիկայից 8-րդ^Ա դասարանում «Էներգիա. կինետիկ և պոտենցիալ էներգիա » / Հ. Առաքելյան /, երկրաչափությունից 8-րդ^Բ դաս-ում « Բազմանկյուններ» /Հ. Համբարձումյան /, մաթեմատիկայից 6-րդ^Ա դաս-ում « Ամբողջ թվերի գումարումը և հանումը» /Ս. Էյսայան /, 5-րդ^Բ դաս-ում « Կոտորակներ» /Ն. Մանուկյան / և այլն:

Նրանց պարապած դասերը աչքի են ընկնում մեթոդական կառուցվածքով, ճանաչողական և կիրառական խնդիրների ամբողջական բացահայտմամբ:

Ուշադրության կենտրոնում են եղել ինֆորմատիկայի դասաժամերը, քանի որ ինֆորմատիկայի ուսուցումը դպրոցում նպաստում է ժամանակակից մարդու աշխարհայացքի ձևավորմանը և անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման համար:

Պատմաաշխարհագրական մասնախմբի /ղեկավար՝ Ս. Հախնազարյան/ անդամների ստեղծագործական աշխատանքը նպաստեց այս մասնախմբի առարկայախմբերի՝ պատմություն, աշխարհագրություն, հասարակագիտություն, ՀԵՊ, ՆԶՊ դասավանդման որակի բարձրացմանը: Չմոռանանք, որ այսօրվա դպրոցում աճած սերունդն է լինելու համամարդկային արժեքների վրա հիմնված անկախ Հայաստանի քաղաքացիական հասարակության դրոշակակիրը: Նա պետք է իմանա իր պատմությունը, իր ազգային հերոսներին, իր պատմաճարտարապետական կոթողները, ճանաչի իր իրավունքներն ու պարտականությունները: Այս սկզբունքով է աշխատում մասնախումբը:

Ուսուցչուհիներ Հ. Շմավոնյանի «Երկրի մակերևույթի հիմնական ձևերը» 5-րդ^բ դաս-ում բնագիտությունից, Օ. Այվազյանի «Բազրատունիներ» 5-րդ^ւ դաս-ում հայրենագիտությունից, Ա. Ստեփանյանի «Իշխանության անհրաժեշտությունը, գործառույթները և նպատակները» 8-րդ^բ դաս-ում հասարակագիտությունից, Ս. Հախնազարյանի «Մեր հայրենիքի իմ փոքր անկյունը» 5-րդ^բ դաս-ում հայրենագիտությունից դասերը բացահայտում էին դասավանդման պրոցեսում համակարգչի դերի և ուսուցչի համակարգչային գրագիտության անհրաժեշտությունը, ինչպես նաև ունեին դաստիարակչական մեծ նշանակություն: Հարկ է առանձնացնել կազմակերպված գիտագործնական կոնֆերանսները Հայոց եկեղեցու պատմությունից՝ «Հայ եկեղեցու դերն ու նշանակությունը» և աշխարհագրությունից՝ «Շրջակա միջավայրի մարդածին աղտոտումը, աղտոտման աղբյուրները, տեսակները» ավագ դպրոցի աշակերտների հետ / ուսուցչուհիներ՝ Հ. Սարգսյան և Հ. Շմավոնյան/: Թեմաները արդի էին ,աշակերտները իրենք էին պատրաստել նյութերը ուսուցչի ուղղորդմամբ:

Կատարված փոխադարձ դասալսումների հիմնական մասը կազմում է ՆԶՊ առարկան, քանի որ կատարվել է ուսումնասիրություն և մանկավարժական խորհրդի նիստում վերլուծվել առարկայի դասավանդման դրվածքը դպրոցում:

Կենսաբիմիայի մասնախումբը /ղեկավար՝ Վ. Ավետիսյան/ աշխատատեղ է արդյունավետ և նպատակային:

Կենսաբանության ուսուցչուհի Հ. Հակոբյանի կազմակերպած բաց դասերը՝ «Արյան պաշտպանական ռեակցիա: Իմունիտետ» 8-րդ^ւ դաս-ում, «Մթնոլորտի պահպանություն» 9-րդ դաս-ում հազեցած էին նոր մեթոդների և հնարների , ՏՀՏ գործիքների կիրառությամբ, աչքի էին ընկնում ոչ միայն գիտական հարուստ բովանդակությամբ, այլև ունեին դաստիարակչական մեծ նշանակություն՝ մարդ և բնություն, էկոլոգիական աղտոտվածություն, գյուղում առկա էկոլոգիական խնդիրներ և այլն:

Քիմիայի ուսուցչուհի Վ. Ավետիսյանի մոտ նորարարական տեխնոլոգիական ծրագրերի կիրառումը դարձել է ամենօրյա դասերի հիմնական մասը, որը սիրով փոխանցում է իր գործընկերներին: Քիմիայի դասերի արդյունավետության բարձրացմանը նպաստում են ն' տեսֆիլմերով դիտելի փորձերը, ն' լաբորատոր սարքավորումներով կատարված քիմիական փորձերը /առկա նյութերի հնարավորության դեպքում/: 7-րդ դաս-ում <<Քիմիական նշաններ>> և 8-րդ^u դաս-ում <<Ջուրը կյանք է>> խորագրով դասերը առաջավոր փորձի փոխանակման դասեր էին, որոնք հազեցած էին, ունեին ուսուցողական նպատակ:

Արդեն ավանդույթ է դարձել, որ մասնախումբը կազմակերպում է գիտագործնական կոնֆերանս՝ ծխախոտ-ալկոհոլ-թմրամոլություն շղթայի պատճառած վնասների և նրանցից պաշտպանված լինելու խնդրի մասին: Այս տարի ևս կազմակերպված աշխատանքը՝ <<Թմրամոլությունը չարիք է>> խորագրով նպատակ ուներ աշակերտների մոտ ձևավոնել ոչ ասելու կարողություն:

Սրբ. Սահակյանի կազմակերպած խոհարարական դասերը նպատակ ունեին նպաստելու աշակերտների մոտ տեսական գիտելիքները գործնականում կիրառելու աշխատանքային կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Կերպարվեստից կազմակերպված բաց դասը՝ <<Մարտիրոս Սարյանի գարնանային ծաղիկների պատկերումը>> 5-րդ^բ դաս-ում նպատակ ուներ խթանել աշակերտների մոտ սեր դեպի արվեստը, ճանաչել մեր մեծերին, գույնը և երանգը օգտագոնծել որպես արտահայտչամիջոց, կազմակերպել այց Մ. Սարյանի տուն-թանգարան:

Կորոնավիրուսի պատճառով մտցված սահմանափակումներից ազատվելով՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչներ՝ Հովսեփյան Վ., Բեյբության Ա. Իրենց աշխատանքային գործունեությունը սկսեցին բնականոն հունով:

Նրանց կազմակերպած դասերը, վոլեյբոլի, ֆուտբոլի մրցումները, սպորտլանդիաները, ինչպես նաև առողջ ապրելակերպի դասաժամերը նպատակ ունեին ընդլայնել աշակերտների աշխարհաճանաչողությունը, մեծերի օրինակով դաստիարակել և օգևորել իրենց սաներին, ձևավորել առողջ, ուժեղ, դրական ու կայուն արժեքներով անհատների, մարզական գործունեությունում արդար գործելու համոզվածություն և այլն: Մեթոդախավորման անդամների կողմից կազմակերպվել են էքսկուրսիաներ բնության պահպանության, երկրաբանության թանգարաններ, բուսաբանական այգի, ինչը խթանում է աշակերտների ճանաչողական հետաքրքրությունները:

Օտար լեզուների մասնախումբը /ղեկավար՝ Գ. Բարսեղյան/ նույնպես աշխատել է կանոնակարգված՝ ըստ տարեսկզբին կազմված աշխատանքային ծրագրի: Դպրոցում որպես երրորդ օտար լեզու ուսուցանվում է անգլերեն:

Մասնախումբը իր կարևորագույն խնդիրներից մեկն է համարել՝ մանկավարժների ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր հնարավորությունների չափով մասնակից դարձնելը՝ ապահովելով սովորողների՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը, ինչպես նաև ուսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվետվությունների և բաց դասերի միջոցով: Օրինակելի դասեր և միջոցառումներ են կազմակերպվել ռուսերենից, գերմաներենից, անգլերենից՝ «Времена года» 5-րդ^u դաս. /Ա.

Արշակյան/, «Падежи русского языка» 6-րդ^u դաս. /Մ. Բաբայան Ա. /, «Der Herbst» 6-րդ^f դաս. և «Sport» 8-րդ^u դաս. / Մ. Խուրդյան/ և այլն:Հակոբյան Գ-ի կազմակերպատ <<Կախարդական տնակը>> և <<Թագավորի նոր զգեստը>> թատերական ներկայացումները աշխատանքային գլուխգործոցներ էին՝ անկրկնելի և ինքնատիպ:

Ուրախալի է այն հանգամանքը, որ բոլոր լսված դասաժամերը իսկապես օրինակելի են՝ իրենց մտահղացումներով, չկրկնվող պլաններով, ժամանակակից խնդիրների մատուցման ձևերով, արդիական հնչողությամբ:

Տարրական դասարանների մասնախմբի / ղեկավար Հ. Պողոսյան / անդամները անընդհատ պրպտումների մեջ են:Ուսուցման ժամանակակից մեթոդները վաղուց նրանց դասաժամերի ուղենիշներն են:Նոր մեթոդները կիրառում են ստեղծագործաբար, շաղկապում դաստիարակչական խնդիրների հետ: Օրինակը՝ անցկացրած դասերը, նպատակը՝ փորձի փոխանակման և առաջավոր մանկավարժների փորձի ներդրման միջոցով դասերը դարձնել առավել արդյունավետ և որակյալ: Օրինակելի դասեր են անցկացվել մայրենիից՝ <<Ա>>տառի շնորհանդես 1-ին դաս-ում/Սաստրյան Ա. , Խաչատրյան Ն./, ինչի ընթացքում աշակերտները մեծ ոգևորությամբ և հետաքրքրությամբ ողջունեցին Ա տառին և մուտք գործեցին գրաճանաչության կախարդական աշխարհ, <<Անակնկալը>> 4-րդ^u դաս-ում/Հովսեփյան Ա. /, <<Ժողովուրդն իմաստուն է. թեմայի ամփոփում>> 2-րդ դաս-ում /Բարեղամյան Կ. /,<<եղեգը, որ շատ էր ուզում դառնալ սրինգ>> 4-րդ^f դաս-ում և այլն, մաթեմատիկայից՝ <<Գումարման հատկությունների կիրառությունը>> 3-րդ^f դաս-ում /Ա. Մանասյան /, <<Մասեր>>4-րդ^u դաս-ում /Ա. Հովսեփյան/, ես և շրջակա աշխարհը առարկայից՝ <<Տարվա եղանակները և մարդը>> 3-րդ^u դաս-ում /Մ. Շահոյան/ և այլն:

Առարկայական մեթոդիավորումների աշխատանքի մակարդակը բավականին բարձր է: Նրանք հետևողական աշխատանք են տանում ուսուցիչների մասնագիտական կարողությունների և մեթոդամանկավարժական վարպետության բարձրացման ուղղությամբ:Ուսուցիչների ինքնակրթության գործին շատ են նպաստում մեթոդամանկավարժական հոգեբանության վերաբերյալ ամենատարբեր թեմաներով բազմաթիվ զեկուցումների , հաշվետվությունների քննարկումները:Առանձնապես մեծ ուշադրություն է դարձվում նրանց կողմից ժամանակակից մեթոդների տիրապետմանը:Մեծ առաջընթաց է նկատվել համակարգչային գրագիտության խորացման գործում:Ուսուցիչների մեծ մասը ուսումնական գործընթացում կիրառում է տեղեկատվական տեխնոլոգիաներ:Փոխադարձ դասալսումների լավ ավանդույթը հնարավորություն է ստեղծում հազորդակցվել գործընկերոջ փորձին, համագործակցել, ընդհանուր ուժերով ստեղծագործական նոր մտահղացումներ ձեռք բերել ուսուցման աշակերտակենտրոն մեթոդում:

Մեթոդական միավորումները իրենց աշխատանքները ավարտել են հաջորդ ուստարում անելիքների և ակնկալիքների լսումներով:

2021-2022 ուստարում ևս նախապատրաստվել , կազմակերպվել ու անց են կացվել դպրոցականների առարկայական օլիմպիադաները,փուլ առ փուլ դրանց արդյունքները քննարկվել են մ/մ նիստերում,կատարվել հետևություններ:Նոյեմբեր ամսին կազմվել է օլիմպիադայի դպրոցական կազմկոմիտե,որի գումարած նիստերում քննարկվել են օլիմպիադաների տարբեր փուլերին առընչվող հարցեր,կազմվել է դպրոցական փուլի աշխատակարգը, հանձնաժողովները:Աշակերտների մեծ ընդգրկվածությունը ապահովվել է դպրոցական փուլի մասսայականությունը. 112 մասնակից:

2021թվ. դեկտեմբերի 8-ից 15-ը դպրոցում անցկացվել է առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլը, որին մասնակցել են

1. «Հայոց լեզու» առարկայից՝ 24 աշակերտներ, որոնցից 3-ը՝ Կարապետյան Նինան /12-րդ դաս./, Մեսրոպյան Էդիկը /9-րդ դաս./, Մինասյան Դիանան /8-րդ դաս./ երաշխավորվել են մասնակցելու տարածքային փուլին

2. «Գրականություն»՝ առարկայից 15 աշակերտներ, որոնցից միայն 1-ը՝ Ամիրխանյան Գրետան երաշխավորվել է մասնակցելու տարածքային փուլին

3 «Ռուսաց լեզու» առարկայից՝ 13 աշակերտներ, որոնցից 3-ը՝ Մեսրոպյան Էդիկը /9-րդ դաս./, Վարդանյան Ժենյան/ 11-րդ դաս./, Կարապետյան Նինան /12-րդ դաս./ երաշխավորվել են մասնակցելու տարածքային փուլին

4 «Պատմություն» առարկայից 16 աշակերտներ, որոնցից 2-ը՝ Հովհաննիսյան Ջուլյան/ 8-րդ դաս./, Եգորյան Արփինեն / 10-րդ դաս./ երաշխավորվել են մասնակցելու տարածքային փուլին

5 «Գերմաներեն» առարկայից 9 աշակերտներ, որոնցից միայն 1 աշակերտ՝ Գրիգորյան Մարիամը /8-րդ դաս./ երաշխավորվել է մասնակցելու տարածքային փուլին

6 «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայից 4 աշակերտներ, որոնցից ոչ մեկը չի երաշխավորվել մասնակցելու տարածքային փուլին

7 «ՆԶՊ» առարկայից մասնակից աշակերտներ չենք ունեցել. դա կապված է եղել ուսուցչի բացակայության հետ:

Օլիմպիադայի դպրոցական փուլին նշված առարկաներից մասնակցած աշակերտների ընդհանուր թիվը 81-ն է, որոնցից 10-ը երաշխավորվել են մասնակցելու տարածքային փուլին:

Տարածքային փուլին մասնակցած 10 աշակերտներից միայն մեկը՝ Եգորյան Արփինեն երաշխավորվել է մասնակցելու մարզային փուլին:

2021 թվ. նոյեմբերի 22-ից մինչև դեկտեմբերի 4-ը անցկացված առցանց օլիմպիադաների առաջին փուլին մասնակցել են համապատասխանաբար

1. <Մաթեմատիկա> առարկայից՝ 23 աշակերտներ տարբեր տարիքային խմբերից

2. «Քիմիա» առարկայից՝ 2 աշակերտներ

3. «Կենսաբանություն» առարկայից՝ 5 աշակերտներ

4. «Աշխարհագրություն» առարկայից՝ 2 աշակերտներ

5. «Ֆիզիկա» առարկայից՝ 3 աշակերտներ

6. <<Ինֆորմատիկա>> առարկայից՝ 1 աշակերտ:

Առցանց օլիմպիադայի դպրոցական փուլին նշված առարկաներից մասնակցած աշակերտների ընդհանուր թիվը 31-ն է, որոնցից 2-ը՝ Չոբանյան Քրիստինեն/12-րդ դաս./ <<Կենսաբանություն>> և Վարդանյան Սուսաննան/ 9-րդ դաս./ «Քիմիա» առարկայից հաղթահարել են անցողիկ շեմը և մասնակցել մարզային փուլին:

Ցավով պետք է նշել, որ հանրապետական փուլին ունեցել ենք 1 մասնակից աշակերտ՝ Եգորյան Արփինեն և արժանացել է խրախուսական մրցանակի:

Մա ցավալի պատկեր է և մտածելու տեղիք է տալիս: Հաջորդ ուստարում պետք է հատուկ ուշադրության կենտրոնում պահել առարկայական օլիմպիադաները:

Հարկ է նշել, որ ուսուցիչները դեռևս բավականին անելիքներ ունեն օլիմպիադաներին մասնակից աշակերտներ նախապատրաստելու գործում: Անհրաժեշտ է աշակերտներին հոգեբանորեն նախապատրաստել, որ օլիմպիադան մի հնարավորություն է ձեռք բերած գիտելիքներով մրցել միմյանց հետ, հնարավորություն՝ համոզվելու, թե որքան է յուրաքանչյուրի իմացության սահմանը:

Աշակերտների հետ պետք է տանել անհատական աշխատանքներ, կազմակերպել արտաժամյա պարապմունքներ, տալ լրացուցիչ առաջադրանքներ, ուղղորդել նրանց: Վերականգնենք մեր բարի ավանդույթները:

<i>Փուլեր</i>	<i>Մասնակցների թիվը</i>	<i>Գերազանցիկներ</i>
<i>Դպրոցական</i>	81/31	62
<i>Տարածքային</i>	10	
<i>Մարզային</i>	3	
<i>Հանրապետական</i>	1	

Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում երկու անգամ դպրոցում՝ որպես վերահսկողական աշխատանք, գրավոր աշխատանքներ են տրվել տնօրենության կողմից <<Հայոց լեզու>> և <<Մաթեմատիկա>> առարկաներից:

Հայոց լեզվից սովորողների գիտելիքները ստուգելու նպատակով նախընտրելի է թելադրություն, քանի որ այն պարզորեն բացահայտում է սովորողների ուղղագրական, կետադրական գիտելիքները, պարզում բառիմացության, տողադարձի, բառի գրության և նրա ընկալման առանձնահատկությունները:

Տարրական դպրոցում տեքստերն ընտրվել են Կ. Չիբուխյանի, Կ. Թորոսյանի թեմատիկ գրավոր աշխատանքների համար նախատեսված ժողովածուից: Թելադրությանը կից տրված տարաբնույթ առաջադրանքները նպատակ ունեն ստուգելու լեզվական գիտելիքների գործնական կարողությունների կիրառումը որոշակի թեմաներից համապատասխան դասարաններում:

Հիմնական և ավագ դպրոցներում թելադրությունները ընտրվել են Ն. Վիրաբյանի և Լ. Մարգարյանի «Հայոց լեզվի գրավոր աշխատանքների ժողովածու»-ից՝ նախատեսված համապատասխանաբար 5-9-րդ և 10-12-րդ դասարանների համար:

Տրված աշխատանքների արդյունքները վկայում են, որ ուսուցիչները տանում են ամենօրյա աշխատանք սովորողների գրագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ, սակայն կան դեռևս վատ ձեռագրեր, անընթեռնելի աշխատանքներ, որոնց շուրջ պետք է լրջորեն աշխատել: Բնականաբար կան և՛ ուսման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող

աշակերտներ, և՛ հետ մնացող աշակերտներ, օրինակ՝ որակի ցածր ցուցանիշ են տվել 7-րդ և 8-րդ^բ դաս-ը, տալիս, որ

		I ԿԻՍԱՄՅԱԿ	II ԿԻՍԱՄՅԱԿ
--	--	------------	-------------

 ինչը ցույց է նրանք չեն տիրապետում ծրագրային

թեմաներին և չեն յուրացրել համապատասխան ուղղագրական և կետադրական գիտելիքները:

Հայոց լեզվից գրավոր աշխատանքներ են տրվել 2-րդ – 12-րդ դասարաններում, ըստ որի ունենք հետևյալ պատկերը՝

1-ին կիսամյակի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 90 %, որակը՝ 56 %, նախորդ ուստարում համապատասխանաբար՝ 88% և 53%, 2-րդ կիսամյակի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 90 %, որակը՝ 59 %, նախորդ ուստարում համապատասխանաբար՝ 89% և 60 % :

1-ին կիսամյակում / համեմատած նախորդ ուստարվա հետ/ թե՛ առաջադիմության, թե՛ որակի առումով գրանցել ենք աճ /համապատասխանաբար՝ \approx 2% և 3% /, իսկ 2-րդ կիսամյակում/համեմատած նախորդ ուստարվա հետ/ առաջադիմության ցուցանիշում գրանցել ենք 1% աճ, սակայն որակի ցուցանիշում՝ 1% նվազում: 1-ին և 2-րդ կիսամյակների միջև համեմատական տանելիս գրանցում ենք առաջադիմության ցուցանիշի կայունություն , որակի 6% աճի ցուցանիշ:

Մաթեմատիկայից ըստ ամփոփված արդյունքների գրանցվել է հետևյալ պատկերը՝

		Առաջ.	Որակ	Առաջ.	Որակ
1	II	97%	72%	100%	75%
2	III ^Ա	85%	38%	94%	63%
3	III ^Բ	76%	37%	100%	56%
4	IV ^Ա	84%	47%	100%	73%
5	IV ^Բ	100%	94%	100%	94%
6	V ^Ա	89%	61%	85%	62%
7	V ^Բ	73%	30%	59%	18%
8	VI ^Ա	80%	56%	85%	69%
9	VI ^Բ	75%	35%	95%	56%
10	VII	61%	10%	78%	6%
11	VIII ^Ա	90%	35%	90%	44%
12	VIII ^Բ	98%	5%	95%	11%
13	IX	100%	24%	92%	26%
14	X	81%	5%	96%	4%
15	XI ^Ա	80%	25%	100%	25%
16	XI ^Բ	93%	68%	100%	73%
17	XII ^Ա	100%	73%	100%	60%
18	XII ^Բ	100%	30%	100%	40%

Մաթեմատիկայից սովորողների գիտելիքները ստուգելու նպատակով նախընտրել ենք կազմել հարցարաններ՝ հաշվի առնելով, որ սովորողները քննությունները հանձնում են հարցարանային տարբերակով: Աշխատանքները կազմելիս հաշվի են առնվել նաև հարցարանների կազմման սկզբունքները, տվյալ դասարանի ուսումնական նյութերը, հեշտից բարդը սկզբունքը և այլն: Զուգահեռ դասարաններում երբեմն տրվել են տարբեր առաջադրանքներ՝ ելնելով դասարանի առանձնահատկություններից: Աշակերտները հիմնականում յուրացրել էին ծրագրային նյութերը, սակայն կային որոշակի տարբերություններ նրանց յուրացման տեսական ու գործնական կարողությունների ու հմտությունների միջև: Բնականաբար կան աշակերտներ, ովքեր չեն կարողացել հաղթահարել դրականի շեմը: Որակական ցածր ցուցանիշ են տվել V^Բ, VII, VIII^Բ, IX, XI^Ա դասարանները, իսկ բարձր ցուցանիշով հանդես են եկել տարրական դասարանները, V^Ա, VI^Ա, XI^Բ, XII^Ա դասարանները:

1-ին կիսամյակի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 87 %, որակը՝ 43 %, նախորդ ուստարում համապատասխանաբար՝ 94 % և 49 %,

2-րդ կիսամյակի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 93 %, որակը՝ 49 %, նախորդ ուստարում համապատասխանաբար՝ 88 % և 49 %,

1-ին կիսամյակում / համեմատած նախորդ ուստարվա հետ/ թե՛ առաջադիմության, թե՛ որակի առումով գրանցել ենք ցուցանիշի նվազում /համապատասխանաբար՝ \approx 7% և 6% /, 2-րդ կիսամյակում՝ /համեմատած նախորդ ուստարվա արդյունքների հետ/ գրանցել ենք առաջադիմության ցուցանիշի աճ /համապատասխանաբար՝ \approx 5% / , որակի ցուցանիշի պահպանում, իսկ 1-ին և 2-րդ կիսամյակների միջև համեմատական տանելիս գրանցում ենք առաջադիմության ցուցանիշի \approx 6 %, որակի ցուցանիշի նույնպես \approx 6 % աճ:

Եթե ընդհանուր համեմատական անցկացնենք 1-ին և 2-րդ կիսամյակներում «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաների առաջադիմության և որակի ցուցանիշների միջև, ապա կունենանք հետևյալ պատկերը՝

Առարկա	ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ			ՈՐԱԿ		ԱՃ
	I կիսամյակ	II կիսամյակ		I կիսամյակ	II կիսամյակ	
Հայոց լեզու	90%,	90 %,	Կայ	56 %	59 %	≈6%
Մաթեմատիկա	87%,	93 %,	աճ ≈6%	43 %	49 %	≈6%

Մարտ ամսվա ընթացքում գրավոր աշխատանքներ են տրվել նաև «Ռուսաց լեզու» առարկայից III-XI դաս-ում, ըստ որոնց գրանցվել է հետևյալ արդյունքը՝

N	ԱՌԱՐԿԱ	ԴԱՍ.	ԱՌԱՋԱԴԻՄ	ՈՐԱԿ
1	Ռուսաց լ.	III ^ա	62%	19%
2		III ^բ	82%	35%
3		IV ^ա	79%	42%
4		IV ^բ	89%	33%
5		V ^ա	85%	35%
6		V ^բ	43%	29%
7		VI ^ա	100%	50%
8		VI ^բ	65%	50%
9		VII/I	44%	7%
10		VII/II	44%	11%
11		VIII ^ա	73%	42%
12		VIII ^բ	65%	18%
13		IX	32%	64%
14		X	47%	14%
15		XI ^ա	88%	33%
16		XI ^բ	94%	55%

Ընդհանուր առաջադիմությունը կազմել է 68 %, որակը՝ 34 % : Գրավոր աշխատանքների վերլուծության ընթացքում պարզվեց, որ աշակերտների տեսական և գործնական

կարողությունների միջև առկա է անհամապատասխանություն: Ցածր արդյունք են տվել 5-րդ^բ/43%/ , 7-րդ/44%/ դասարանները: Շատ քիչ են հանդիպում կանոնավոր, գեղեցիկ, համաչափ ձեռագրեր, որակ են կազմում ջնջումները: Որակային բարձր ցուցանիշ է ապահովել 11-րդ^բ/55%/ դասարանը:

Ընդհանուր առմամբ գրագիտական մակարդակի վիճակը ոգևորող չէ, քանի դեռ յուրաքանչյուր դասարանում կան թույլ և չաշխատող երեխաներ:

Գրավոր աշխատանքների արդյունքները մանրամասն քննարկվել են առարկայական մասնախմբերի նիստերում:

Ուսուցիչը պետք է անհատական աշխատանք տանի աշակերտների հետ, ուժեղ համակազմ ունեցող դասարաններից պետք է պահանջել ավելին, քան միջին որակ ունեցողներից: Պետք է հիշել, որ տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքը ամփոփում է տրված ուսուցողական և ստուգողական աշխատանքների արդյունքը և ուսուցիչների հետևողականությունը:

Մ/Խ և մ/մ մայիսյան և հունիսյան նիստերում, համատեղ գումարված աշակերտական և ծնողական ժողովներում լուսաբանվել են 2021-2022 ուստարվա ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման , սովորողների փոխադրման, ավարտման և քննական կարգը, քննությունների և նախաքննական կոնսուլտացիաների աշխատակարգը:

Ժամանակին կազմվել են քննական հանձնաժողովները, ձևավորվել է քննական անկյուն:

I – III դաս-ի 114 աշակերտներ , V – VIII դաս-ի 151 աշակերտներ , X – XI դաս-ի 55 աշակերտներ փոխադրվել են հաջորդ դասարան /մանկխորհուրդ թիվ 10 /:

IV դասարանի 37 աշակերտների թույլատրվել է մասնակցելու գիտլիքների ստուգմանը <<Մաթեմատիկա>> և <<Մայրենի>> առարկաներից:

Գիտելիքների ստուգման առաջադրանքները 4 տարբերակով կազմվել էր տարրական մեթոդափափորման կողմից՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված նմուշների:

IV դասարանի մայրենիի գիտելիքների ստուգումը իրականացվում է թեստի միջոցով, որը կազմված է բնագրից և տասը առաջադրանքից և գնահատվում է առավելագույնը 15 միավորով: Առաջադրանքները վերաբերում էին բառի ուղղագրությանը, բառիմաստի իմացությանը, բառի կազմությանը, խոսքի մասերի ճանաչմանը, նախադասության գլխավոր անդամներին և նախադասության տեսակներին:

Տարվա ընթացքում նմանատիպ աշխատանքներ երեխաները շատ էին կատարել, նրանք ծանոթ էին աշխատանքի կատարման ձևին և պայմաններին՝ տեքստն ընթերցել 2-3 անգամ, հասկանալ իմաստը, կատարել ճիշտ հետևություններ, աշակերտներից շատերը ունեն հետևություն և եզրակացություն կատարելու կարողություն, տեքստը վերլուծելու, գնահատելու և արժևորելու հմտություն: Նրանք նաև ճիշտ են կատարել 2-րդ մասի առաջադրանքները և ստացել են բարձր գնահատականներ:

Ըստ քննական թեստերի վերլուծության կարելի է ասել, որ աշխատանքում թույլ տրված սխալները հիմնականում վրիպակներ կամ անուշադրության հետևանքով թույլ տրված տառային բացթողումներ էին: Որոշ աշակերտների մոտ նկատվում է մտքի սխալ շարադրանք, նրանք սխալներ ունեն բառի կազմությանը վերաբերող առաջադրանքներում: Ոմանք սխալներ են թույլ տվել բառակազմական, ուղղագրական աշխատանքներում, մի քանիսն էլ թույլ էին տվել սխալներ՝ սխալ ըմբռնելով առաջադրանքի պահանջը:

Գերազանց աշխատանք էին ցուցաբերել Բարլոյան Սամվելը, Վարդանյան Միլենան, Բարլոյան Էլենը, Բագրատյան Գրիգորը, Ղազարյան Սուսաննան, Ղազարյան Ֆեյան, Վարդանյան Մանվելը, Ազատյան Միշան, Կարապետյան Հայկուհին, Մինասյան Մանեն, Պետրոսյան Լիանան և այլն:

Ըստ մայրենի առարկայի գիտելիքների ստուգման IV^u դասարանում սովորող 19 աշակերտների առաջադիմության մակարդակը 100% է, իսկ որակական տվյալների մակարդակը՝ 79%:

2021-2022 ուստարվա մայրենի առարկայի տարեկան և գիտելիքների ստուգման միավորային գնահատման որակական տվյալների տոկոսային հարաբերությունը հետևյալն է. տարեկան՝ 79% / 9 աշակերտ՝ գերազանց, 6 աշակերտ՝ հարվածային/

գիտելիքների ստուգում՝ 79% / 8 աշակերտ՝ գերազանց, 7 աշակերտ՝ հարվածային/:

Ըստ մայրենի առարկայի գիտելիքների ստուգման IV^բ դասարանում սովորող 18 աշակերտների առաջադիմության մակարդակը 100% է, իսկ որակական տվյալների մակարդակը՝ նույնպես 100%:

2021-2022 ուստարվա մայրենի առարկայի տարեկան և գիտելիքների ստուգման միավորային գնահատման որակական տվյալների տոկոսային հարաբերությունը հետևյալն է. տարեկան՝ 94% / 9 աշակերտ՝ գերազանց, 8 աշակերտ՝ հարվածային/

գիտելիքների ստուգում՝ 100% / 14 աշակերտ՝ 9 գերազանց, 4 աշակերտ՝ հարվածային/:

Մայրենիի գիտելիքների ստուգումից հետևում է, որ աշակերտները բավականաչափ գիտելիքներով, հմտություններով և կարողություններով ավարտում են տարրական դպրոցը:

Մաթեմատիկայի գիտելիքների ստուգման թեստերը կազմված էին 4 տարբերակներից՝ 17 առաջադրանքով: Թեստի առաջին 10 առաջադրանքները ունեին ընտրովի պատասխաններ, 11-13-րդ առաջադրանքները՝ համառոտ, իսկ 13-15-րդ առաջադրանքները՝ ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ էին: 16-րդ առաջադրանքը երկրաչափական բնույթի խնդիր էր և պահանջում էր նաև գծագրային համառոտագրում և լուծում, 17-րդ առաջադրանքը խնդիր էր, որը պահանջում էր համառոտագրում և լուծում:

1-10 առաջադրանքները վերաբերում էին «Բազմանիշ թվեր», «Պարագիծ, մակերես», «Ամբողջ և մաս» թեմաներին: Մյուս առաջադրանքներում ստուգվում է արտահայտության արժեքը, թվերի հաջորդականության օրինաչափության գտնելը, խնդիրներ համառոտագրելու և լուծելու կարողությունները:

Աշակերտները նախապատրաստվել էին ամենայն լրջությամբ: Մաթեմատիկայի դասաժամերին ստացած գիտելիքները ու հմտությունները օգնեցին, որ նրանք ճիշտ կողմնորոշվեն և անսխալ կատարեն առաջադրանքները: Շատերը ստացել էին բարձր գնահատականներ: Անթերի գրավոր աշխատանքներ էին ներկայացրել Մինասյան Մանեն, Պետրոսյան Լիանան, Բարլոյան Սամվելը, Ղազարյան Ֆեյան և այլն: Քննական թեստում աշակերտների թույլ տված սխալները տարաբնույթ էին կամ կրում էին անուշադրության հետևանքով թույլ տված վրիպակների, սխալ հաշվումների բնույթ: Աշխատանքներում աշակերտների կողմից թույլ տված սխալները ու բացթողումները հիմնականում վերաբերվում էին 11-րդ առաջադրանքի ճիշտ հաշվմանը, 13-րդ առաջադրանքին, որում պետք էր դնել փակագծեր՝ ճիշտ հավասարություն ստանալու համար: Որոշ երեխաներ էլ դժվարացել էին թվաբանական գործողությունների նշաններն ընտրելիս, թվի մասը գտնելիս, շարժման վերաբերյալ խնդիրները լուծելիս:

Ըստ մաթեմատիկա առարկայի գիտելիքների ստուգման IV^u դասարանում սովորող 19 աշակերտների առաջադիմության մակարդակը 100% է, իսկ որակական տվյալների մակարդակը՝ 79% :

2021-2022 ուստարվա մաթեմատիկա առարկայի տարեկան և գիտելիքների ստուգման միավորային գնահատման որակական տվյալների տոկոսային հարաբերությունը հետևյալն է. տարեկան՝ 74% / 6 աշակերտ՝ գերազանց, 8 աշակերտ՝ հարվածային/ գիտելիքների ստուգում՝ 79% / 8 աշակերտ՝ գերազանց, 7 աշակերտ՝ հարվածային/:

Ըստ մաթեմատիկա առարկայի գիտելիքների ստուգման IV^e դասարանում սովորող 18 աշակերտների առաջադիմության մակարդակը 100% է, իսկ որակական տվյալների մակարդակը՝ 88 % :

2021-2022 ուստարվա մաթեմատիկա առարկայի տարեկան և գիտելիքների ստուգման միավորային գնահատման որակական տվյալների տոկոսային հարաբերությունը հետևյալն է. տարեկան՝ 94 % / 10 աշակերտ՝ գերազանց, 7 աշակերտ՝ հարվածային/ գիտելիքների ստուգում՝ 88% / 14 աշակերտ՝ գերազանց, 2 աշակերտ՝ հարվածային/:

Գրավոր աշխատանքները ստուգելիս պարզվեց, որ անբավարար ստացողներ չկան: Քննական առարկաների առաջադիմությունը 100%, որակը՝ մայրենիից՝ 89 %, մաթեմատիկայից՝ 84 %:

Նախորդ ուստարվա հետ համեմատական տանելիս գրանցում ենք թե՛ մաթեմատիկայից, թե՛ մայրենիից որակային ցուցանիշների աճ: 2020-2021 ուստարում գիտելիքների ստուգման միավորների միջինը եղել է մաթեմատիկայից 7,3 , մայրենիից՝ 8,2, ընդամենը՝ 7,8: Այս տարի ցուցանիշները հետևյալն են՝ մաթեմատիկայից 8,2, մայրենիից՝ 8,4, ընդամենը՝ 8,3: Գրանցում ենք մաթեմատիկայից՝ $\approx 0,9\%$, մայրենիից $\approx 0,2\%$ աճի ցուցանիշ: Ընդամենը՝ 0,2%:

9-րդ դասարանի 29-ը աշակերտներից 27-ին թույլատրվել է մասնակցելու ավարտական քննությունների /մանկխորհուրդ թիվ 10/ , ովքեր էլ հաջողությամբ հանձնել են քննությունները և 26-ը փոխադրվել են 10-րդ դասարան, իսկ Հարությունյան Սարգիսը Հայոց լեզվից ունի վերաքննություն : 1 աշակերտ ունենալով 200 ժամից ավելի բացակայություն մնացել է կրկնելու տվյալ դասարանի դասընթացը, իսկ Մելքոնյան Ֆրունզը ԿԱՊԿՈՒ աշակերտ է և քննություններին չի մասնակցում:

Արդեն քանի տարի է իններորդյակները քննություն են հանձնում հստակեցվադ 7 առարկաներից, որոնցից «Հայոց լեզու և գրականություն» /գրավոր/ և «Մաթեմատիկա» >> /գրավոր/ առարկաները կենտրոնացված համակարգով : 9-րդ դասարանի գրավոր քննությունները թեստային են և պահանջում են 5-9-րդ դաս-ի ծրագրային նյութերի իմացություն: Տարիների ընթացքում որակական տվյալներ ցուցաբերած աշակերտները պահպանել են իրենց գնահատականները:

Հայ գրականություն, հայոց պատմություն , օտար լեզու առարկաներից աշակերտները հանձնեցին բանավոր քննություններ, որոնց տոմսերը նախապես քննարկվել և կազմվել էին առարկայական մեթոդմիավորումներում: Բանավոր քննությունները ստուգում են աշակերտի ոչ միայն առարկայական գիտելիքները, այլև բանավոր խոսքի զարգացումը, ուղղախոսական կանոնների իմացությունը, կարդալու և պատմելու կարողություններն ու հմտությունները:

Ընդհանուր պատկերը այսպիսին է. 2021-2022 ուստարում 9-րդ դասարանի քննական միջին գնահատականները հետևյալն են՝

-18-

«Հայոց լեզու և գրականություն» - 13,4

«Մաթեմատիկա» - 14

« Գրականություն» - 11,6
 « Օտար լեզու» - 10,7
 « Բնագիտություն» - 14
 « Հայոց պատմություն» -10,4

Միջին գնահատականը $\approx 12,5$ միավորն է :

Ստորև ներկայացնում եմ արդյունքները համապատասխան աղյուսակով՝

2021-2022

միավորը	Հայոց լեզու	Գրակ	Բնագիտություն				մաթեմ	Ռուսաց լեզու	Հայոց պատմ.
			աշխարհ	ֆիզիկա	կենսաբ	Քիմիա			
20	-	2	-	-	-	-	2	1	1
19	-	-	-	1	-	-	3	-	-
18	1	-	1	4	2	-	2	2	2
17	5	2	-	-	-	-	1	1	1
16	2	3	1	-	1	-	2	2	2
15	1	-	-	-	-	-	3	1	2
14	3	3	1	-	1	1	4	2	-
9-13	14	11	-	2	12	-	9	5	6
8	-	6	-	-	-	-	1	13	13

Նախորդ ուստարվա հետ համեմատական տանելիս պարզ է դառնում, որ հայոց լեզու, բնագիտություն և մաթեմատիկա առարկաներից գրանցել ենք համապատասխանաբար $\approx 0,4\%$, $\approx 1\%$, $\approx 4\%$ աճի ցուցանիշ/ ընդամենը՝ $2,2\%$ / , իսկ ռուսաց լեզու և հայոց պատմություն առարկաներից համապատասխանաբար $0,3\%$ և $1,6\%$ նվազման ցուցանիշ / ընդամենը՝ $0,9\%$ /:

Ավարտական քննությունների արդյունքների վերլուծության նպատակն էր աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների տիրապետման մակարդակի մասին որոշակի և հավաստի գործնական տեղեկատվություն ստանալ, բացահայտել աշակերտների արժեքային որակները և դրանց հիմման վրա կատարելագործել ուսման գործընթացը, վերահսկել ուսուցման որակի ապահովումը, զարգացնել սովորողների խոսքի կուլտուրան և շարադրման կարողությունները:

9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքները համարել բավարար:

12-րդ դասարանի 32 աշակերտներ առանց տարեկան անբավարար գնահատականների մասնակցել են պետական-ավարտական քննություններին/մանկխորհրդի որոշում թիվ 10/։ Տասներկուերորդիներից 13 աշակերտ /շրջանավարտների ≈41%/ մասնակցել են միասնական քննությունների տարբեր առարկաներից։

Քննություններին գնահատվել են 12-րդ դասարանի բոլոր աշակերտները՝ ցուցաբերելով ստորև ներկայացվող արդյունքները՝

2021-2022

Միավորը	Հայոց լեզու և գրակ.	Մաթեմ.	Հայոց Պատմ.
20	4	-	2
19	2	3	3
18	5	3	2
17	-	-	2
16	3	3	6
15	3	-	1
14	3	8	8
9-13	7	8	7
8	1	-	-

Ընդհանուր պատկերը այսպիսին է. 2021-2022 ուստարում 12-րդ դասարանի քննական միջին գնահատականները հետևյալն են՝

«Հայոց լեզու և գրականություն» - 15,5 /≈0,5 % աճի ցուցանիշ/

«Մաթեմատիկա» - 14.2 /≈0,2 % նվազման ցուցանիշ/

«Հայոց պատմություն» - 15,1 /≈0,4 % աճի ցուցանիշ/

Միջին գնահատականը ≈ 15 միավորն է։ Մանկավարժական խորհրդի թիվ 12 որոշմամբ 4-րդ դաս-ի 37 աշակերտները ավարտում են տարրական դպրոցը և փոխադրվում 5-րդ դաս., 9-րդ դաս-ի 28 աշակերտներ ավարտում են հիմնական դպրոցը և փոխադրվում 10-րդ դաս., իսկ 12-րդ դաս-ի 32 աշակերտներ ավարտում են միջնակարգ դպրոցը։

Կատարված աշխատանքների կողքին կան նաև որոշակի բացթողումներ, որոնց մի մասը կային նաև նախորդ ուսումնական տարիներին։ Մանկավարժական խորհրդի և ընդհանրապես մանկավարժների ուշադրությունն են հրավիրում հետևյալ կետերի վրա.

1. Կրթական չափորոշային միջին և առավելագույն մակարդակներով սովորող աշակերտների սակավություն, ուսման արդյունավետության և որակի ոչ բարձր մակարդակ։
2. Աշակերտների մոտ ուսման և հատկապես որոշ առարկաների նկատմամբ անլիարժեք վերաբերմունք։
3. Համաձայն ուսպլանի պահանջների, առանձին առարկաներից S2S կիրառման ոչ պարբերականություն և ոչ բոլոր ուսուցիչների ու դասարանների ընդգրկվածություն։

4. Դասապրոցեսի համար համակարգչային կաբինետի կահավորվածության և տեխնիկական հագեցվածության խնդիրներ:

5. Հագեցած ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիաների բացակայություն:

6. Առանձին դասապրոցեսների վատ դիտակտիկ և տեխնիկական հագեցվածություն:

7. Օլիմպիադաներում ցուցաբերած բարձր նիշին քիչ զիջող արդյունքներ:

Նորաշենի միջն. դպրոցում մշտապես կազմակերպվում և անցկացվում են դպրոցում դաստիարակության կազմակերպման արդյունավետության բարձրացմանը ուղղված միջոցառումներ, համակարգվում է մասնագիտացված կրթական աջակցության ծառայությունները: Կազմակերպվում են միջոցառումներ, կոնֆերանսներ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով: Կազմակերպված դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունն ապահովում են դպրոցի և սովորողների ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը: 2019-20 ուս-տարվա համարկազմվել է ՄԿԱ գծով տեղակալի տարեկան պլանը, համադպրոցական միջոցառումների պլան, ուսուցիչների հերթապահության ցուցակ, դասղեկների դասղեկական ժամերի գրաֆիկ, ինչպես նաև դասղեկների դասղեկի ժամերի բաց պարապմունքների թեման և օրերը, արտադասարանական խմբակների պարապմունքների գրաֆիկ, դպրոցական ծնողխորհրդի կազմը, դպրոցի գեղագիտական և սպորտային խմբակների մասնակցող աշակերտների ցուցակ, աշակերտական խորհրդի կազմ և այլն:

Համադպրոցական միջոցառումներ

1. Սեպտեմբերի 1-ին նվիրված միջոցառում “Ողջուն քեզ, դպրո՛ց” խորագրով: Միջոցառումը կազմակերպել են XIIա և XIIբ դաս. և դասղեկները: Նրանց նպատակն է 1. Գնահատել գիտելիքի դերը մարդու կյանքում, 2. Աշակերտների մեջ սերմանել հարգանք ուսուցչի աշխատանքի նկատմամբ, և ամենակարևորը ընդունել I դասարանցիների մուտքը դպրոց: Գեղեցիկ զարդարված դպրոցի բակում տիրում է տոնական տրամադրություն: Դպրոցի աշակերտները և ուսուցիչները սկսում են նոր ուսումնական տարիին:

2. Սեպտեմբերի 21-ը ՀՀ անկախության օրն է: Անկախության 31 ամյակը մեծ շուքով տոնվում է: Դպրոցում տոնական տրամադրություն է: Միջոցառումը, որը կրում է “Դու հավերժող իմ Հայաստան” խորագիրը կազմակերպել է ԴԱԿ. կազմակերպիչ Մ. Հախվերդյանը: Միջոցառմանը մասնակցում են տարիքային տարբեր խմբեր: Միջոցառման նպատակն է երեխաների մեջ դաստիարակել հայրենասիրություն, հավատ սեփական երկրի ու ժողովրդի հանդեպ:

3. Հոկտեմբեր ամիսը նշանավոր է ուսուցիչների համար, որովհետև այդ ամսվա 5-ին տոնում են ուսուցչի օրը: Ավանդույթի համաձայն այս տարի էլ դպրոցը մեծ շուքով տոնեց ուսուցչի օրը:

4. Աշունը նշանավոր է իր խայտաբղետ գույներով: Այս տարի դպրոցում ստեղծել են “Մինի այգի”: Սա այն այգին է, որը մշակվում էր աշակերտների ձեռքերով: Աշակերտները մշակեցին սմբուկ, պղպեղ և լոլիկ, իսկ հետո նրանք պահածոյացրին բանջարեղենը: Ծրագրի ղեկավարներ Հ. Հակոբյանը և Վ. Ավետիսյանը ջանք չխնայեցին աջակցելու ծրագրի կատարմանը:

5. Նոր տարվա դիմակահանդեսին մասնակցում են միջին և բարձր դասարանների աշակերտները: Խայտաբղետ հագուստները առանձնակի ուշադրություն են հրավիրում իրենց վրա: Երեխաները իրենց ձեռքով էին պատրաստել դիմակները և հագուստները: Երեխաները մեծ բավականություն և հաճույք զգացին այդ միջոցառումից, հատկապես փոքրիկները, երբ ստացան Ձմեռ պապիկի նվերները:

6. Հերթական միջոցառումը նվիրված է Հայկական բանակի 30 ամյակին “Մեզ բացակա չղնեք” խորագրով: Միջոցառման նպատակն է ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Միջոցառումը, որտեղ մասնակցում են տարբեր տարիքային խմբերի աշակերտներ, ներկայացնում են Հայաստան աշխարհի բնանկարը, խաղաղ պայմաններում ստեղծագործ հայ ժողովրդի աշխատանքը, մարտունակ բանակի ստեղծման անհրաժեշտությունը, բանակի ստեղծման պատմությունը, նորաշենցիների մասնակցությունը այդ պատերազմին: 44 օրյա պատերազմին Նորաշեն համայնքի բնակիչներ Սերոբ Վարդանյանի, Հարութ Կիրակոսյանի անմահ փառքի մասին:

7. Հունվար ամսին X և XI դասարաններում (դասղեկներ Հ. Հակոբյան, Վ. Ավետիսյան) անցկացվեց “Թմրանյութերի և հոգեմետ նյութերի ազդեցությունը մարդու առողջության վրա” խորագրով գիտական կոնֆերանս: Կոնֆերանսի էությունը ներկայացրին ուսուցիչները՝ կարդալով կարճ դասախոսություն: Իսկ աշակերտները ներկայացրին ինֆորմացիա՝ պատմական ակնարկ, թմրամիջոցների շուկա, թմրամիջոցների գիտական բնորոշում, թմրամոլություն, թմրամիջոցների տեսակները, պաթոգենեզ, բուժում թեմաների վերաբերյալ: Կոնֆերանսի վերջում աշակերտների մոտ արդեն ձևավորվեց ո՛չ թմրանյութերին ասելու կարողություն:

8. Միջոցառումը, որը նվիրված էր գիրք նվիրելու և մայրենիի օրվա, կազմակերպել էր փոխտնօրեն Ս. Հակոբյանը՝ “Եվ Մեսրոպի սուրբ հանձարով” վերնագրով: Միջոցառման նպատակն է երեխաների մեջ դաստիարակել հայեցիություն, սեր մայրենի լեզվի նկատմամբ: Միջոցառման ժամանակգրությունը հարուստ էր և բովանդակալից:

9. Գեղեցիկ միջոցառում էին կազմակերպել գրադարանավարներ Գյուլնարա Կիրակոսյանը և Գայանե Հակոբյանը: Միջոցառումը նվիրված էր “Գիրք նվիրելու օրվան”: Միջոցառման նպատակն էր ներկայացնել՝ գիրք նվիրելու օրվա խորհուրդը, տոնի նպատակը, գրքի դերը մարդու կյանքում, գրքի տեսակները:

10. Մարտի 1-ը քաղաքացիական պաշտպանության օրն է: Ամեն տարի այդ օրը դպրոցում անցկացվում է համադպրոցական միջոցառում: Միջոցառման նպատակն է երեխաներին ծանոթացնել արտակարգ իրավիճակներում գործելու կանոններին:

11. Գեղեցիկ միջոցառում էին կազմակերպել ՄԿԱ և դակ կազմակերպիչներ Ա. Ստեփանյանը և Մ. Հախվերդյանը “Մեր տան աստվածն է մայրս” խորագրով: Մասնակցում էին համարյա բոլոր տարիքային խմբերը: Միջոցառումը անցավ ուրախ և բովանդակալից միջավայրում:

12. Շատ հաճելի միջոցառում են կազմակերպել դասվարներ Ն. Խաչատրյանը և Ա. Ասատրյանը: Երեխաները հրաժեշտ տվեցին Այբբենարանին և արդեն տառաճանաչ լինելով պատրաստ էին ընդունել “Մայրենի” դասագրքին:

13. Շատ հուզիչ և գեղեցիկ ներկայացրին XIIա և XIIբ դդ. իրենց “Վերջին զանգ” հանդեսը: Դասղեկներ Կ. Հովնաթանյանը և Ա. Բաբայանը ամեն ինչ արել էին, որ միջոցառումը անցներ հետաքրքիր և ուսանելի:

3. VIIIա և VIIIբ դդ. դասղեկներ Մ. Հակոբյանը և Ն. Մանուկյանը ջանք չէին խնայել, որպեսզի միջոցառումը մատուցվեր հավուր պատշաճի: Աշակերտները մեծ ոգևորությամբ էին ներկայացնում իրենց երգերն ու բանաստեղծությունները:

Տոնական տրամադրություն է տիրում IVա դաս. (դասվար՝ Ա. Հովսեփյան): Աշակերտները պատրաստվում են տոնել Սուրբ Հարության տոնը կամ Ջատիկը: Միջոցառման նպատակն է ներկայացնել Ջատիկի տոնի խորհուրդը, գատկական ազգային-ծիսական ավանդույթները, պահպանել և փոխանցել սերունդներին:

Հին հայկական ավանդական հագուստները, որոնք մի առանձին խորհուրդ են հաղորդում երեխաներին, նրանք երգում, պարում և արտասանում են, պատմում ավանդական գրույցներ, ներկայացնում բեմադրություն ավանդական տիկնիկներով, որոնք պատրաստել են իրենց ձեռքով:

Դասղեկների աշխատանքների վերահսկողությունը:

Դպրոցում անցկացվող դասղեկի բաց պարապմունքները (I-XI դասարաններում) նպաստում են դասղեկների կողմից աշակերտների դաստիարակչական աշխատանքները էլ ավելի բարձր մակարդակի հասցնելու համար:

1. ՀՀ Արարատի մարզի Նորաշենի Ավ. Իսահակյանի անվան միջն. դպրոց ՊՈԱԿ-ի հողամասում հիմնված են ծիրանի, սալորի, դեղձի այգիներ, որոնք մշակվում են այգեպանի, տնտեսվարի, դպրոցի աշխատակիցների կողմից: “Մինի այգի” ծրագրին մասնակցելու համար դպրոցում հողահատկացում է կատարվել: Նոր հողատարածքը 5•10 քմ նախատեսված է բանջարեղեն աճեցնելու համար, քանի որ “դպրոցական սնունդ” ծրագրի շրջանակներում բանջարեղենը անհրաժեշտություն է: Հողամասում մշակվել է լոլիկ, վարունգ, գազար, հազար, ճակնդեղ, կանաչի, բամիա, սմբուկ, լոբի, պղպեղ: Վիտամիններով հարուստ այս բանջարեղենը կներառվի “Դպրոցական սնունդ” ծրագրի մեջ որպես բանջարեղենային թարմ աղցաններ:

Դ/բ/պ է VIIIա դաս. թեման “Ուսուցչի օր” (դասղեկ՝ Ն. Մանուկյան): Աշակերտները տեղեկություններ էին պատրաստել ուսուցչի դժվար, բայց շնորհակալ աշխատանքի մասին: Դրան հետևեց երգերն ու բարեմաղթանքները, որոնք պատրաստել էին աշակերտները իրենց ուսուցիչների համար:

Դ/բ/պ է VIIIբ դաս (դասղեկ՝ Մ. Հակոբյան): Այս դասը նույնպես նվիրված էր “Ուսուցչի օրվան”: Դ/բ/պ է XIբ դաս (դասղեկ՝ Հ. Հակոբյան): «Արտագաղթը ազգի մեծագույն չարիք է»

Թեմայով: Դասի նպատակն է ներկայացնել արտագաղթը, որպես ազգի չարիք է: Աշակերտները կարդում են իրենց գրած շարադրությունները պանդխտության վերաբերյալ, մտաբերում են պանդխտության մասին երգեր և բանաստեղծություններ:

Դ/բ/պ է IIIբ դաս. (դասվար՝ Ա. Մանասյան)՝ “Բարեկիրթ վարվելակերպ” վերնագրով: Դասի նպատակն էր երեխաներին բացատրել բարեկրթության որակների դերի և նղանակության մասին, վարքի կանոնների էության մասին: Կարողանան արժևորել և կիրառել վարքի կանոնները առօրյայում:

Դ/բ/պ է VII դաս. “Ընտանիք և պարտականություն” թեմայով (դասղեկ՝ Տ. Հախնազարյան): Դասի նպատակն է կարևորել ընտանիքի դերը, սահմանել ընտանիք հասկացությունը, ճանաչել ընտանիքի հանդեպ ունեցած պարտականությունները:

Դ/բ/պ է IVա դաս. (դասվար՝ Ա. Հովսեփյան): Դասի թեման է “Բնական աղետներ”: Դասի նպատակն է երեխաների մոտ դաստիարակել բնության նկատմամբ պատասխանատվություն: Մեփական արարքների և հետևանքների գիտակցման միջոցով ձևավորել էկոլոգիական դաստիարակության համար անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:

Դ/բ/պ է IVբ դաս. (դասվար՝ Հ. Պողոսյան):

Սա միայն դաս չէր, այլ դաս-միջոցառում “Հավերժի ճամփորդը” խորագրով: Ամբողջ դասի ընթացքում երեխաները կարծես մեծացել էին մի քանի տարով: Նրանք այնպես էին ներկայացնում հայ ժողովրդի պատմական ուղին և տեղը համաշխարհային արենայում, որ կարելի է մտածել երեխաները եկել են այդ դարերից: Դաս-միջոցառումը ուներ հայրենասիրական, դաստիարակչական և խորը վերլուծական նպատակներ:

Դ/բ/պ է X և XIբ դդ.: Թեման է "Թմրամոլությունը չարիք է": Դասղեկներ՝ Հ. Հակոբյանը և Վ.

Ավետիսյանը մանրամասն դասախոսության ձևով ներկայացրին թմրամոլության աղետալի հատկությունները, ներկայացրին օրինակներ թմրամոլների կյանքից, դիտեցին ֆիլմեր, որտեղ ներկայացված էր թմրամոլների կյանքից դրվագներ: Դասղեկների նպատակն է երեխաների մեջ դաստիարակել, սերմանել և ամրապնդել այդ չարիքի դեմ բացասական վերաբերմունք և պայքարի ցանկություն:

Դ/բ/պ է VII դաս.: Դասը նվիրված է Հայոց բանակին: Աշակերտները ներկայացնում են բանակի կազմավորման պատմությունը, նվիրում երգեր և բանաստեղծություններ հայոց բանակին: Ուսուցչի նպատակն է երեխաների մեջ դաստիարակել ռազմահայրենասիրական ոգի:

Դ/բ/պ է II դաս. (դասվար՝ Կ. Բարեղամյան) "Հացը" թեմայով: Ուսուցչուհու նպատակն է ներկայացնել աշակերտներին հացը որպես արժեք: Երեխաները ներկայացրին հացի ստեղծման, արտադրման և անցած ճանապարհի մասին: Ավանդական հայկական լավաշը նրանք ներկայացնում են որպես հայ ժողովրդի գոյատևման և միջազգային արենայում ներկայանալի արժեք:

Դ/բ/պ է Iա դասարանում (դասվար՝ Ն. Խաչատրյան) "Գարուն" թեմայով: Դասի նպատակն է բացահայտել ձեռք բերված գիտելիքները ներկայացնելու կարողություններն ու հմտությունները, դաստիարակել սեր դեպի բնությունը, զարգացնել երեխաների համ...

Դ/բ/պ է VIIIա դաս. (դասղեկ՝ Ն. Մանուկյան): Դասի թեման է "Պահպանենք շրջակա միջավայրը":

Դասի ընթացքում ուսուցիչը կիրառել է նոր տեխնոլոգիաներ: Դասի նպատակն է պարզել, թե ինչ մակարդակով են պատկերացնում թեման: Դրա համար անհրաժեշտ է ունենալ սեփական մտածելակերպ, անել մաքրություն պահպանման կուլտուրա:

Երեխաներով շատ գեղեցիկ և գրագետ ներկայացրին թեմային վերաբերվող լրացուցիչ տեղեկություններ: Դ/բ/պ է VIա դաս. (դասղեկ՝ Հ. Սարգսյան): Թեման՝ "Հանդիպում քահանայի հետ": Երեխաները այցելեցին եկեղեցի, որտեղ հանդիպեցին քահանայի հետ: Քահանան տեղեկություններ հաղորդեց եկեղեցու պատմությունից, այնուհետև պատասխանեց երեխաների հարցերին:

Արտադասարանական աշխատանքների վերլուծություն

Արտադասարանական աշխատանքները լինելով դպրոցական գործընթացի օրգանական շարունակությունը, նպաստում են սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորմանը, գիտելիքների խորացմանն ու հարստացմանը:

Դպրոցում գործում են 3 արտադասարանական խմբակներ՝ «Նորաշեն» մարզական խմբակը ղեկավար՝ Վ.Հովսեփյանը, «Հմուտ ձեռքեր» խմբակը ղեկավար՝ Սրբ.Սահակյան, «Սովորում ենք գերմաներեն» գերմաներենի խմբակը ղեկավարը՝ Գ.Հակոբյան:

Ուսումնական տարվա ընթացքում խմբակները աշխատել են շաբաթական 3 ժամ և ունեցել շոշափելի հաջողություններ:

Օրինակ՝ «Նորաշեն» խմբակի հիմքի վրա ստեղծվել է «Նորաշեն» վոլեյբոլի թիմը, որը մասնակցել է մրցաշարերին և դարձել է հաղթող:

«Հմուտ ձեռքեր» խմբակի նպատակն է եղել սովորողների մոտ ստեղծագործական մտածողության զարգացմանը և գեղագիտական ճաշակի ապահովմանը:

Հաջորդ խմբակը «Սովորում ենք գերմաներեն» խմբակն է: Այս խմբակն էլ լավ ավանդույթների վրա հիմնված խմբակ է, որը ղեկավարում է հմուտ և փորձառու ուսուցիչ ընկ.Գ. Հակոբյանը:

Պարապմունքների ժամանակ սովորում են գերմաներեն քերականություն, հարստացնում են բառապաշարը, ինչպես նաև սովորում են ճիշտ և գեղեցիկ խոսել գերմաներենով:

Աշխատանք ծնողական խորհրդի անդամների հետ:

Դպրոցական գործի անբաժանելի մաս է կազմում ծնողական խորհրդի անդամների կատարած աշխատանքը: Դեռևս ուս. տարվա սկզբից գումարվել է խորհրդի նիստ, որտեղ կազմվել է ծնողխորհրդի 2021-2022թթ. ուս. տարվա աշխատանքային պլան, որի համաձայն ամիսը 1 անգամ գումարվել է ծնողխորհրդի նիստ, որտեղ քննարկվել է ամենատարբեր հարցեր կապված դպրոցական գործընթացի հետ: Նիստերի ընթացքում քննարկվել և հաստատվել են դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, դպրոցական բյուջեի քննարկումը:

Աշակերտական խորհրդի աշխատանքների վերլուծություն:

ՈՒ-ս. տարվա սկզբին դպրոցում ձևավորվում է աշակերտական խորհուրդը, որը ուս. տարվա ընթացքում ակտիվ աշխատանքներ է տանում դպրոցում: Դասարանական ժողովների արդյունքում ձևավորված դասարանական աշխորհի նախագահներից ստեղծվեց դպրոցական աշխորհը, որը բաղկացած է 22 անդամներից: Փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրվեց աշխորհի նախագահ և քարտուղար: Տարվա ընթացքում աշխորհի անդամների ջանքերով կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ, շաբաթօրյակ, որի արդյունքում մաքրվեց դպրոցի շրջապատը, կատարեցին ծառատունկ: Աշխորհի աշխատանքը կազմում է դպրոցական գործի մի մասը և իր նպատակային և բարերար ազդեցությունը ունի ընդհանուր գործընթացի վրա:

Դպրոցի կողմից հաստուկ ուշադրության կենտրոնում է **Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը: 2021-22 ուս. տարվա ընթացքում դպրոցում անցկացվել են մի շարք միջոցառումներ տարբեր տարիքային խմբերում:**

X-XII դդ. - սեմինար - Գիտագործական կոնֆերանս. «Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի՝ 2020թ. կառավարության ներկայացրած միջոցառումների ծրագրի մասսայականացում»

X-XII դդ. - սեմինար - Հանդիպում բժշկի հետ: «Թմրանյութերի և հոգեմետ նյութերի ազդեցությունը մարդու առողջության վրա»

IX-X դդ. - սեմինար – «ՁԼՄ-ների դերը թմրամոլության դեմ պայքարի գործում»

VIII-XII դդ. – սեմինար - Նախագորակոչային տարիքի սովորողների և զինծառայողների շրջանում թմրամոլության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման և իրավապահ մարմինների հետ համագործակցությունը:

VII-X դդ. - Գիտագործական կոնֆերանս - Զեկուցում-ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և զանգվածային մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման ապահովում:

Առողջ ապրելակերպի արմատավորումը հանրության մեջ՝ սկսած դպրոցից:

Անչափահասների շրջանում թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի գործածման վնասները:

XI-XII դդ. - սեմինար - Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող՝ ՀՀ ներպետական իրավական ակտեր, ՄԱԿ-ի կոնվեցիա և միջազգային փաստաթղթերի դրույթներ Թմրամոլության քրեաիրավական պատասխանատվությունը օրենքի դաշտում:

X-XII դդ. - հանդիպում - Հանդիպում ոստիկանի հետ՝ «ՀՀ-ում թմրամոլության և թմրաբիզնեսի միջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ռազմավարությունը՝ կապված հանցագործության հետ»:

Աշխտրի - զեկուցում - «Թմրամոլության և դրա հասցրած վնասները անչափահասների շրջանում»:

Ծնողխորհուրդ – զեկուցում – Բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում, հանրության իրազեկում, բնակչության լայն խավերին սպորտի պարապմունքներում ներգրավվում, առողջության ամրապնդում, ֆիզիկական պատրաստականություն և սպորտի դերի բարձրացում:

VII-IX դդ. - Դասղեկի ժամ - Դասղեկի բաց պարապմունքներ. «վատ սովորություններ» խորագրով

1. Բույսերից պատրաստվող թմրամիջոցները և դրանց շրջանառությունը

2. Թմրանյութերի և հոգեմետ նյութերի ազդեցությունը անչափահասների առողջության վրա

3. Հունիսի 26-ը թմրանյութերի դեմ պայքարի օր

4. Հոգեմետ դեղեր մեթամֆետամինը և ափիոնը որպես ծանր հետևանք ունեցող դեղամիջոցներ:

5. Թմրամոլությունը՝ մարդկային աղետ տարվա ընթացքում:

-27-

X-XII դաս

6. Թմրամոլությունը հիվանդություն չէ.

Ինչպե՞ս ազատվել դրանից

7. Թմրամոլությունը հիվանդություն է, լավագույն բուժումը՝ կանխումը

8. Թմրամոլություն, կործանված կյանք ու քայքայվող ընտանիքներ

9. Թմրամոլությունը թակարդից դեպի Աստծո արքայություն

10. Թմրամոլությունը՝ որպես հասարակական չարիք

11. Հեռու և մոտիկ վտանգը

12. Երիտասարդները ընդեմ թմրամոլության:

Գրադարանավարի կատարած աշխատանք

Մեծ աշխատանք է կատարվել դասղեկների հետ համատեղ երեխաների մեջ ընթերցանության նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելու համար: Ուսման առաջադիմությունը բարձրացնելու և մտահորիզոնը լայնացնելու հիմքում ընկած է գեղարվեստական գրականություն ընթերցելու կարողությունը:

Ուս. տարվա ընթացքում այցելել ենք դասարաններ, ստուգել դասագրքերի վիճակը:

Տարվա ընթացքում գրադարանում հաճախակի տեղի է ունեցել ընթերցանության ժամեր, տարրական օղակի համար մեր կողմից ընթերցվել է տարբեր հեղինակների հեքիաթներ:

Հոկտեմբերի 7-ին՝ գրադարանավարի օրվա առթիվ մենք հյուրընկալեցինք դպրոցին կից գործող քոլեջի փոքրիկներին: Այդ օրը նրանք մեզ համար պատրաստել էին հաճելի անակնկալ փոքրիկ միջոցառման տեսքով, մեզ նվիրեցին իրենց ձեռքով պատրաստած գեղեցիկ բացիկներ: Այդ օրը երեխաները շրջեցին գրադարանում ծանոթացան գրքերի հետ:

Փետրվարի 19-ին՝ Հ. Թումանյանի ծննդյան օրը, նշվում է նաև գիրք նվիրելու օրը: Տոնի գիտակցությունն արդեն առկա է և այն գնալով ավելի է իմաստավորվում՝ գիրքը դիտարկելով որպես հոգևոր և մշակութային անփոխարինելի արժեք: Այդ օրը գրադարանում գրադարանավարների կողմից կազմակերպվել է գեղեցիկ միջոցառում, Վա և Վբ դդ. մասնակցությամբ: Բոլոր դասագրքերը դասավորվել և հաշվառվել են, նորոգվել և սոսնձվել են:

Մայիս ամսին դասղեկների և ծնողների հետ միասին, սովորողներից հավաքվել է նրանց հատկացված բոլոր դասագրքերը:

Ամառային արձակուրդի ընթացքում աշակերտներին տրամադրվել է գեղ. գրականություն և ուսումնական թեմաներին համապատասխան գրականություն ըստ օղակների:

Գրադարանը այն կարևոր օղակն է, որը կանոնակարգված կազմակերպելով երեխաների ընթերցանությունը, սեր և հետաքրքրություն է առաջացնում գրքի նկատմամբ, այն նպաստում է ուսման առաջադիմության բարձրացմանը: Մեպտեմբեր ամսին դպրոցի 418 աշակերտներին բաժանվել են դասագրքեր, որոնք օգտագործվել են ամբողջ տարվա ընթացքում:

2021-2022թթ. ուս. տարում գրադարանի ընթերցողների մեջ ընդգրկված է եղել շուրջ 60 աշակերտ: Նրանք ունեն ընթերցողական քարտեր:

Դասագրքերի գումարը հավաքվել է ժամանակին և ԴՏՀՏՀ է մուծվել 1.436.610դ., որի վճարման դրամարկդի մուտքի օրդերները և բանկային հաշիվների քաղվածքները պահպանվում են: (1-4-րդ դասարանների դասագրքերը ֆինանսական հաշվետվության մեջ չեն մտնում): Պետությունը օգնության կարգով դպրոցին հատկացվել է 158.900դ., որը բաշխվել է ծնողագուրկ և անապատով ընտանիքների երեխաներին, թվով 39 աշակերտ:

Դպրոցի գրադարանի, ուսուցչանոցի և դասարանների պատին ամրացվել է էլեկտրոնային դասագրքերից օգտվելու QR կոդերը:

Դպրոցի դաստիարակության աշխատանքները կատարվել են ըստ նախապես կազմված պլան-ծրագրի:Թե՛ միջոցառումների և թե՛ դասապրոցեսի ընթացքում երեխաները նախ և առաջ կարիք ունեն լավագույնս ներգրավվելուն, որտեղ և կկարողանան բացահայտվել, ինքնադրսևորվել և ինքնահաստատվել: Դպրոցական առօրյան հազեցած է եղել բազմաբնույթ և բազմաբովանդակ աշխատանքներով: Աշխատանքները հաջողությամբ ընթացել են իմ և աշակերտների հաջողված համագործակցության շնորհիվ: Աշխատանքները պլանավորելիս հաշվի է առնվել աշակերտների ճիշտ դաստիարակության նպաստող աշխատանքներ:2021-2022ուստարվա ընթացքում դպրոցում կազմակերպված միջոցառումները միտված են եղել աշակերտների ներգրավվածության միջոցով նրանց մոտ ինքուրույն գործելու հմտությունների, նախապաշարմունք- ներից ձեռքբազատվելուն և անձնային զարգացում ապահովելուն:

Գիտելիքը հզոր ուժ է,որը միշտ էլ օգնում է ավելի ճիշտ ապրել՝ հարստացնելով մարդու միտքն ու հոգին : Կրթված մարդը միշտ էլ գտնում է իր տեղն ու դիրքը՝արժանանալով շրջապատի ուշադրությանն ու համակրանքին:Հայտնի է այն միտքը,որ մարդը ստեղծված է այն գրքերից,որոնք կարդացել է:Հետևաբար պետք է շարունակ լցնել և հարստացնել գիտելիքների պաշարը՝ ձգտելով ինքնազարգացման և հոգու կատարելության:

Գիտելիքի և դպրության օրը դպրոցում նշվեց մեծ շուքով:12-րդ դասարանի աշակերտներն իրենց շնորհակալական խոսքն ուղղեցին ուսուցիչներին՝արժևորելով կատարած բավականին բարդ աշխատանքը, գիտելիքների տված մեծ պաշարները և դաստիարակությունը:Աշակերտների էլույթը հիացմունքով և ոգևորությամբ լցրեց ներկաների սրտերը,իսկ առաջին դասարանցիները,ովքեր սրտատրոբ սպասում էին իրենց էլույթին, երգ ու պարով, արտասանությամբ զարմացրեցին ներկաներին:Միջոցառման գլխավոր նպատակն էր աշակերտների մեջ գիտելիք ստանալու ցանկություն սերմանելը:



Դպրոցից է սկսվում այն արահետը,որը դառնալու է կյանքի ճանապարհը՝ճանապարհ դեպի պարզ մարդկային հարաբերություններ,ճանապարհ դեպի աշխատանք ,ճանապարհ դեպի սեր ու երջանկություն,և իհարկե, ճանապարհ դեպի գիտելիք:

Յուրաքանչյուր նոր ուսումնական տարվա սկզբին գումարվում է աշակերտական ընդհանուր ժողով : 2021-2022 ուստարվա աշակերտական ընդհանուր ժողովը գումարվեց 2021 թվականի սեպտեմբերի 3-ին: Ժողովի ժամանակ քննարկվեց հաստատության ինքնավարության գործադիր մարմնի աշակերտական խորհրդի կանոնադրության նախագծի հաստատման հարցը, աշակերտական խորհուրդ ձևավորելու և խորհրդի թվակազմը հաստատելու հարցը, ընտրական հանձնախմբի կազմը հաստատելու հարցը:

Նոր ուսումնական տարվա սկզբին աշակերտական խորհրդի կազմում տեղի են ունենում փոփոխություններ կապված աշակերտների համակազմի փոփոխման հետ: Այս տարի ևս ձևավորվեց նոր աշակերտական խորհուրդ, որն էլ առաջին նիստի ժամանակ նախագահ ընտրեց Լարիսա Օնիկի Ղազարյանին/10-րդ դասարան/: Ամեն ամիս գումարվել են աշակերտական խորհրդի նիստերը, որի ընթացքում քննարկվել են բազմաթիվ հարցեր, զեկուցումներ, էքսկուրսիաներ, միջոցառման թեմատիկ պլաններ





Անկախություն երազեցինք , Ազատություն պահանջեցինք, Եվ կերտեցինք մենք իսկական

Ազատ,անկախ ,Մայր Հայաստան

Մեպտեմբեր ամիս մեզ հայերիս համար շատ կարևոր ամիս է : Այդ ամսի սեպտեմբերի 21-ին է նշվում Հայաստանի Հանրապետության անկախության օրը: Անկախություն, որը սերունդներ էին երազել, ու սերունդներ էին իրենց ստեղծագործ միտքն ու բազկի ուժը նվիրաբերել այդ երազանքի իրականացման համար:

Աշակերտական խորհրդի անդամները դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Մ. Հախվերդյանի ղեկավարությամբ անցկացրեցին միջոցառում՝ հավերժող իմ Հայաստան! խորագրով: Միջոցառումը նպատակ ուներ աշակերտների շրջանում բարձրացնել ռազմահայրենասիրական ոգին, հայրենիքի հանդեպ սերը :



2020 թվականի Սեպտեմբերի 27:Այս օրը պատերազմ սկսվեց Արցախի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև: 44-օրյա պատերազմի արդյունքում բազմաթիվ ընտանիքների ճրագներ մարեցին:Նորաշեն գյուղում էլ մարեց երկու տան ճրագ:Սերոբ Վարդանյանի և Հարություն Կիրակոսյանի անունները դարեր շարունակ կհնչի մեր երեխաների շուրթերից:Աշակերտական

խորհրդի և Մ. Հախվերդյանի նախաձեռնությամբ դպրոցում բացվել է անմահ հերոսների հիշատակին նվիրված անկյուն,որտեղ ամեն տարի այս օրը հարգանքի տուրք է մատուցվում անմահ հերոսների հիշատակին նվիրված:

Մեր հայրենիքի համար մարտիրոսված հերոսներն են,ովքեր անմահ են,հավերժ են,ինչպես անմահ է նրանց թողած գործը,որի շարունակողները մենք ենք:Հանուն մեր նահատակների սուրբ հիշատակի,նրանց երազանքների իրականացման ,նրանց սերունդների ապագայի մենք պարտավոր ենք և կանենք անհնարինը , որպեսզի դարեր ի վեր կանգուն ու անառիկ մնա մեր երկիրը:Ահա այս խոսքերով են դաստիարակվում մեր դպրոցի աշակերտները:

Ուսուցիչ,անձ,որի օգնությամբ աշակերտները ձեռք են բերում գիտելիքներ,ունակություններ և առաքինություն: Հոկտեմբերի 5-ին նշվում է ուսուցիչների տոնը:Տոնի գլխավոր առաքելությունը ուսուցիչներին աջակցելն ու գնահատելն է:Նորաշենի Ավ. Իսահակյանի անվան միջն. դպրոցի 8-րդ դասարանցիները դասղեկներ Ն. Մանուկյանի,Մ. Հակոբյանի և դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Մ. Հախվերդյանի հետ համատեղ անցկացրեցին գեղեցիկ և բովանդակալից միջոցառում՝ նվիրված ուսուցչի տոնին:Միջոցառումը նպատակ ուներ աշակերտների մեջ սերմանել սեր,հարգանք,խոնարհում ուսուցչի նկատմամբ,քանի որ ով էլ լինի՝նախագահ,բժիշկ,վարորդ, նավաստի,առաջին հերթին ինչ-որ մեկի աշակերտն է եղել:Դպրոցը բոլորիս սովորեցնում է կյանքի դասեր:

Շարունակելով հոկտեմբեր ամսվա տոները ,որ հոկտեմբերի 7-ին աշակերտական խորհրդի և ԴԱԿ - ի նախաձեռնությամբ դպրոցում նշվեց գրադարանավարների օրը:Աշակերտները անակնկալ էին պատրաստել նրանց համար: Այդ օրը հանդիպում էին կազմակերպել նույն դպրոցում գործող զարգացման կենտրոնի սաների հետ:Այդ օրը փոքրիկ այցելուները ծանոթացան դպրոցի հարուստ գրադարանի,գրադարանի աշխատակցուհիների հետ:Գեղեցիկ բանաստեղծություններ ու երգեր հնչեցին դպրոցի գրադարանում,որից հետո երեխաների համար հեքիաթ կարդացին և մուլտոդիտում կազմակերպեցին:Հանդիպումը նպատակ ուներ փոքրիկների մեջ սերմանել այն պարզ գաղափարը, որ գիտելիքի հանդեպ սերը սկսվում է ոչ միայն ուսուցչից ,այլ նաև գրադարանից:



Հոկտեմբերյան տոնական տրամադրությունը շարունակական էր այս տարի մեզ համար:Հոկտեմբերի 12-ին դպրոցի բակում բոլորս ուրախ տրամադրությամբ, ծափողջույներով դիմավորեցինք 6-րդ դասարանի աշակերտ Հակոբ Թադևոսյանին,ով մասնակցելով Ուկրաինայում կայացած կարատեի միջազգային մրցաշարին՝ հաղթել է և զբաղեցրել պատվավոր առաջին տեղը:



Հաշվի առնելով աշակերտների նախասիրությունները դպրոցում գործում է արտադպրոցական խմբակներ:Այս տարի <<Հմուտ ձեռքեր>> խմբակի ղեկավար Ս. Սահակյանի հետ համատեղ կազմակերպել ենք ձեռքի աշխատանքների ,նկարների ցուցադրություն,բանջարեղենային աղջանների պատրաստում,մրգերի ձևավորում:Այսպիսի աշխատանքները արտահայտում են երեխաների հոգու ներդաշնակությունը :



Աշակերտների ամենասիրված տոներից մեկն է համարվում բերքի տոնը: Աշնանը հավաքաց բերքն ու բարիքը մենք լցնում ենք մեր ամբարները և սպասում ձմռան գալուն: Իսկ ,ահա, 6-րդ դասարանի աշակերտները իրենց հավաքաց բերք ու բարիքով եկել են դպրոց նշելու իրենց սիրելի տոնը՝ Բերքի տոնը:Նրանք մեծ ոգևորությամբ, երգով,պարով նշեցին այդ օրը:Իրենց ամբարած բերք ու բարիքը հյուրասիրեցին աշակերտներին և ներկաներին:



Այս օրվա շնորհիվ աշակերտները սովորում են արժևորել գյուղացու աշխատանքը,սիրել դիմացինին, կիսել ունեցածը ըներների հետ:

Աշնանը հաջորդում է տարվա ամենահեքիաթային եղանակը՝ձմեռը:Ձմռանն աշակերտները սպասում են անհամբերությամբ:Այդ եղանակին աշակերտները ունենում են ձմեռային արձակուրդ, նշում են

բոլորիս կողմից այդքան սպասված Ամանորը:Աշակերտական խորհրդի անդամները հերթական նիստի ժամանակ քննարկեցին առաջին կիսամյակի կատարած աշխատանքները,ինչպես նաև սկսեցին նախապատրաստական աշխատանքներ ամանորյան միջոցառման համար: Նրանք իմ դեկավարութ-

յամբ մասնակիցներ ընտրեցին տարրական,միջին և ավագ դասարաններից:Միջոցառումը տեղի ունեցավ դեկտեմբերի 24-ին:Գեղեցիկ զարդարված դահլիճում տիրում էր բարձր տրամադրություն: Աշակերտները ցուցադրեցին գեղեցիկ բեմական խաղեր,մուլտֆիլմի հատվածներ,հնչեցին գեղեցիկ երգեր:Այսպիսի բարձր տրամադրությամբ աշակերտները գնացին վայելելու ձմեռային արձակուրդները:Այս միջոցառումը նպատակ ուներ երեխաների մեջ սերմանել հավատ սեփական ուժի,կարողության,բարության նկատմամբ:



Գիրքը մարդկության լավագույն ստեղծարարներից է:Դրա միջոցով մենք դարեր շարունակ փոխանցում ենք մեր գիտելիքները հաջորդ սերունդներին:Եթե չլիներ գիրքը ամեն դարաշրջան նոր Նյուտոն,Շեքսպիր և Էյնշտեյն պետք է ունենար:Գիրքը տալիս է գիտելիք,զարգացնում մարդու մտածելակերպը, երևակայությունը,ընդլայնում է նրա աշխարհայացքը: Փետրվարի 19-ը Հայաստանում հռչակված է <<Գիրք նվիրելու օր>>:Գրքի տոնն այս օրը նշելը պատահաբար չէ

ընտրված:1869 թվականի այս օրը Լոռվա Դսեղ գյուղում ծնվել է տաղանդաշատ գրող,բանաստեղծ, հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանը:

Աշակերտական խորհրդի անդամների,գրադարանավարների և դասղեկների հետ համատեղ աշխատանքի շնորհիվ դպրոցի գրադարանում տեղի ունեցավ բովանդակալից միջոցառում այդ տոնի առթիվ:Միջոցառման ընթացքում աշակերտները և ուսուցիչները միմյանց նվիրեցին գրքեր ,իսկ աշակերտական խորհրդի անդամները գրադարանին նվիրեցին Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունների և պատմվածքների ժողովածու:



Փետրվար ամիսը չավարտեց միայն գրքի տոնով:Դպրոցում գործող վոլեյբոլի թիմը կրկին փայլեց իր հաղթանակով:Մարգիչ Վ. Հովսեփյանի կատարած բարձր աշխատանքի շնորհիվ <<Ձյան վոլեյբոլի մինչև 18 տարեկան տղաների Կոտայքի մարզի բաց առաջնությունում>>մեր դպրոցի աշակերտները գրանցեցին հաղթանակ՝ գրավելով պատվավոր առաջին տեղը:




Քաղաքացիական բնակչության պաշտպանության հարցը հատկապես կարևորվում է պատերազմական իրավիճակներում:

Մարտի 1-ը միջազգային հանրությունը նշում է Քաղաքացիական պաշտպանության օր: Այս օրը Նորաշենի Ավ. Իսահակյանի անվան միջին դպրոցի աշակերտները, դպրոցի ողջ անձնակազմը ռազմագիտության ուսուցիչ Վահագն Հովսեփյանի ղեկավարությամբ անցկացրեց ուսումնա-վարժություն՝ տագնապային իրավիճակում արագ և ճիշտ կողմնորոշվելու համար: Ինչպես նաև բոլոր դասարաններում անցկացվեցին զեկուցումներ և քննարկումներ:



Աշակերտական խորհրդի նախագահ Լ. Ղազարյանի նախաձեռնությամբ տարվա ընթացքում կազմակերպել ենք բանավեճեր և քննարկումներ վնասակար սովորությունների վերաբերյալ: Այս ամիս և նախատեսվել էր անցկացնել քննարկում «Թմրամոլությունը մեծագույն չարիք է» խորագրով: Թեմայի շրջանակներում աշակերտները խոսեցին վնասակար սովորությունների, դրանց թողած

հետևանքների և դրանցից զերծ մնալու մասին: Նրանք իրենց խոսքում կարևորեցին առողջ ապրելակերպը: Նմանատիպ զեկուցումներն ու քննարկումները մեծ դեր ու նշանակություն ունեն երեխաների ճիշտ դաստիարակության հարցում: Պետք է ճիշտ կերպով ներկայացնել այն վնասները և հետևանքները, որոնք առաջանում են վատ սովորության հետևանքով:



Ջինվորական ծառայության նկատմամբ գրավչությունը բարձրացնելու և կրտսեր սպայական մասնագետների առկա և հեռանկարային պահանջարկի բավարարմանն ուղղված աշխատանքները խթանելու նպատակով մարտի 4-ին Նորաշենի Ավ. Իսահակյանի անվան միջն. դպրոցի տնօրենությունը կազմակերպեց ավագ դպրոցի աշակերտների մասնագիտական կողմնորոշման հարցին նվիրված դաս, որը աշակերտներին կօգնի մասնագիտական կողմնորոշմամբ զինվորական ծառայություն ընտրելու հարցում:



<<Մանիտարահիգիենիկ մաքրման օրեր համայնքում>>ծրագրի շրջանականերում մեր աշակերտները և դպրոցի ողջ անձնակազմը ակտիվորեն մասնակցել է մաքրման աշխատանքներին,նպաստել մաքուր և կանաչապատ միջավայր ստեղծելու գործին:



Մեզ շրջապատող միջավայրը անմիջականորեն ազդում է մեր տրամադրության վրա,ուստի պետք է մաքրենք,խնամենք և պահպանենք մեր շրջակա միջավայրը,չէ որ շրջապատի մաքրությունը մեր անվտանգության երաշխիքն է:

Մարտ ամսվա կատարած աշխատանքների հաջորդում է ապրիլի 7-յան ուրախ տրամադրությունը:

Մայր`սրբություն ամենասուրբ,

Մայր`նրբություն ամենանուրբ.

Ահա այս խոսքերով սկսվեց Մայրության և գեղեցկության տոնին նվիրված գեղեցիկ միջոցառումը: Մկա գծով տնօրենի տեղակալ Ա. Ստեփանյանի հետ համատեղ անցկացրեցինք հրաշալի միջոցառում`բարձր տրամադրություն և ժպիտներ պարզնելով ներկաներին:Միջոցառման ընթացքում հնչեցին մայրերին նվիրված ամենազերմ ու բարի խոսքեր,երգեր,պարեր:Երեխաները այս մի քանի

ժամվա ընթացքում կարողացան արժևորել և գնահատել մոր մեծ դերն ու նշանակությունը իրենց կյանքում:Մայր լինելը բնավ խաղ չէ,զգացողություն է,պատասխանատվություն:



Ապրիլի 24-ը հայ ժողովրդի կյանքում եղած թերևս ամենածանր օրերից մեկն է: Այս օրը հայ ժողովուրդը աշխարհի բոլոր անկյուններից գալիս է Հայաստանում մատուցում անմեղ

գոհերի հիշատակին: Ամեն տարի ավանդույթ դարձած կերպով հեռու կազմակերպում ենք էքսկուրսիաներ դեպի Երևան: Ծիծեռնակաբերդի հուշահամալրի, այցելում Մեծ Եղեռնի գոհարան:



Քանի որ խոսեցի էքսկուրսիաներից, հարկ եմ համարում նշել, որ ուստարվա ընթացքում միշտ կազմակերպում ենք ճանաչողական և ուսուցողական էքսկուրսիաներ, այցելում պատմամշակութային տեսարժան վայրերն, թանգարաններ, կազմակերպում ենք ֆիլմդիտում և մուլտդիտումներ՝ կախված տարիքային առանձնահատկություններից, այցելում համերգասրահներ, թատրոններ: էքսկուրսիաների շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում է գեղագիտական ճաշակ, վարվելակերպի կանոններ:

Միլվա Կապուտիկյանի տուն-թանգարան այցելած մեր 3-րդ դասարանցիները դասվարներ Ա. Մանասյանի և Ս. Շահոյանի ղեկավարությամբ հրաշալի ծրագրով էին ներկայացել՝ արտասանելով Կապուտիկյանի մանկական և քնարական գործերից:



Այցելություններ են կազմակերպվել Հովհաննես Թումանյանի թանգարան, Բնության պահպանության թանգարան, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Եռաբլուր և շատ ու շատ այլ վայրեր: էքսկուրսիաների շնորհիվ աշակերտների մեջ սերմանել ենք, սեր և պատասխանատվության հայրենիքի նկատմամբ, ձևավորել և պահպանել հարգանք, ճանաչելու և գնահատելու զգացում, ծանոթացրել հասարակական վայրերում ճիշտ վարքով և վարվելակերպով դրսևորելու կարգապահական նորմերին :

Ամփոփելով ուսումնական տարվա կատարած բազմաբովանդակ ու բազմաբնույթ աշխատանքները, պետք է մեջբերում անեն Կոմիտասի խոսքերով. <<Ուսուցիչ պարոններ, քույրեր, զգուշությամբ ու երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին>>:

